«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

ՆԱԽԱԲԱՆ

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը (այսուհետ՝ ՇՏՊՔ, ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 5

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 11

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 11

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 14

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 16

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 20

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 25

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 28

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 32

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 35

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 38

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 40

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 42

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 46

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 47

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 49

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 51

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 53

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 54

ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԸ

Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:

ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը.

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը (նախկին հաստոցա-գործիքաշինական տեխնիկումը) հիմնադրվել է 1960 թ.-ին: 1985 թ.-ին Լենինականի հաստոցա-գործիքաշինության տեխնիկումը վերանվանվել է Լենինականի պոլիտեխնիկումի:

Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կոլեգիայի 03.12.1999թ. թիվ 2/7 որոշման Լենինականի պոլիտեխնիկումը վերանվանվել է պոլիտեխնիկական քոլեջի: ՀՀ կառավարության 10.08.2001թ. թիվ 741 որոշմամբ Գյումրու պետական պոլիտեխնիկական քոլեջը վերանվանվել է Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջի:

2007 թ.-ին ՀՀ վարչապետի որոշումով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի որոշմամբ քոլեջը մրցութային կարգով ընդգրկվել է Եվրոպական Միության բյուջետային աջակցության ծրագրով նախատեսված 12 բազմագործառութային քոլեջների ցանկում:

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 199–Ն որոշմամբ՝ «Գյումրու պետական ճարտարագիտական քոլեջ» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի: Վերջինս տեղակայված է Շիրակի մարզի Գյումրի քաղաքում[1]:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը 2021-ին ստացել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով:

ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը

Համաձայն «ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության»՝ մարզի զարգացման հիմնական գերակայություն է սահմանվել տեղեկատվական տեխնոլոգիաների և թեթև արդյունաբերության ոլորտների զարգացումը[2]: Դիտարկելով քոլեջի իրականացրած կրթական ծրագրերի և մարզի առաջնահերթությունների համապատասխանեցումը, նշենք որ, ՄՈՒՀ-ում ներկայումս իրականացվում են՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Խոհարարական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր», «Հագուստի մոդելավորում և նախագծում», «Համակարգիչների շահագործում» կրթական ծրագրերը:

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացման նպատակով դասավանդում է 47 դասախոս, որից ներկայումս միայն մեկն է գոծատու դասավանդող:

Ըստ «ՀՀ Շիրակի մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության»՝ մարզի կրթական համակարգի հիմնական խնդիրն է հանդիսանում մասնագիտական կրթության

[1] ՇՏՊՔ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, էջ 5
[2] ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2025-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (http://shirak.mtad.am/files/docs/37621.pdf), էջ 14

անհամապատասխանությունն աշխատաշուկայի պահանջներին[3]: ՇՏՊՔ-ի ստանձնած կարևոր դերակատարությունն է տարածաշրջանում հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված ծրագրեր և միջոցառումներ իրականացնելը: Նոր մասնագիտությունների ներդրման համար քոլեջում հիմք է հանդիսացել աշխատաշուկայի ուսումնասիրությունը:

Քոլեջում միջնակարգ և հիմնական կրթության հիմքով սովորում է 328 ուսանող: Քոլեջում դասավանդում են 36 դասախոս, որոնցից 8-ը աշխատում են համատեղությամբ, 1-ը՝ ժամավճարային հիմունքներով: Քոլեջում գործատու-դասախոսներ ներգրավված չեն: ՇՏՊՔ 67 շրջանավարտներից 13-ը շարունակում են ուսումը բուհերում, 27-ը աշխատում են, որից 10-ը՝ իրենց մասնագիտությամբ[4]:

Քոլեջին «Զբոսաշրջություն», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Խոհարարական գործ», «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի հատկացվում են 20 լիցենզիոն տեղեր, «Սոցիալական աշխատանք», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և համակարգչային ցանցեր», «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտությունների ընդունելության համար՝ 25 լիցենզիոն տեղեր և «Համակարգիչների շահագործում» մասնագիտությունների ընդունելության համար՝ 30 լիցենզիոն տեղեր: Վերջիններս հիմնականում լրացվում են, բացառությամբ «Զբոսաշրջություն» (ընդհանուր 7 ուսանող), «Կարի արտադրության տեխնոլոգիա» (ընդհանուր 8 ուսանող) և «Սոցիալական աշխատանք» (ընդհանուր 19 ուսանող) կրթական ծրագրերի, որտեղ ընդունելության ցուցանիշները համեմատաբար առավել ցածր են:

[3] ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2025-2027ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (http://shirak.mtad.am/files/docs/37621.pdf), էջ 28

[4] ՇՏՊՔ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, էջ 63

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի առաքելությունն է՝ «նպաստել Շիրակի մարզում մասնագիտական կրթության զարգացմանը, միջազգային մակարդակի նորարական կրթական որակի ապահովմանը՝ շեշտը դնելով ծառայությունների որակի բարելավման, կրթական համակարգի և գործատուների, սոցիալական գործընկեր այլ կազմակերպությունների միջև գործընկերության ապահովման վրա: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և ղեկավար դերի համար՝ զարգացող աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան»:

Քոլեջը բարելավել է իր ռազմավարական ծրագիրը նախորդ հավատարմագրման արդյունքում, այն դարձնելով երկարաժամկետ (5-ամյա) և մշակելով կից պլան-ժամանակացույց՝ այն համապատասխանեցնելով տարածաշրջանի կարիքներին: Սակայն ՌԾ-ն չի փոխկապակցվել ստորաբաժանումների կարճաժամկետ (տարեկան աշխատանքային) պլանների հետ: Չի վերլուծվել տվյալ կամ նախորդ ՌԾ-ի կատարողականները: Քոլեջում ռազմավարական կառավարումը նոր է ներդրվում: Քոլեջն իր վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն և ռիսկերի վերհանում համակարգված ձևով չի իրականացնում: Դրա վկայությունն է ՌԾ մշակման հիմքում նման փաստաթղթավորված ուսումնասիրության բացակայությունը:

Կառավարչական որոշումները հիմնվում են հավաքագրված տվյալների վրա, սակայն հավաստի տվյալների հավաքագրման և վերլուծման կայուն մեխանիզմներ դեռևս առկա չեն, և որոշումները կայացվում են հիմնականում դիտարկումների, համագործակցող կառույցների հետ քննարկումների արդյունքում, որոնք ոչ միշտ են կարող արտահայտել ընդհանրական պատկերը:

Կառավարչական որոշումները ընդհանուր առմամբ հանգեցրել են դրական արդյունքների և, թեև դանդաղ տեմպերով, սակայն նպաստում են քոլեջի առաքելության և ՌԾ նպատակների իրականացմանը, սակայն ամբողջական ՌԾ իրականացումը փաստացի ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության պայմաններում իրատեսական չէ:

Գործատուների հետ ստեղծված գործընկերային հարաբերությունների շնորհիվ կառավարչական որոշումները որոշ չափով նպաստել են կրթական ծրագրերի բարելավմանը և շնորհվող որակավորումների արժանահավատության բարձրացմանը:

Քոլեջում ձևավորված կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովման դերը և դրա զարգացումը: Որակի ապահովման համակարգը իրականացնում է կարիքների գնահատում և խնդիրների վերհանում, սակայն դրանց արդյունքների ընդհանրական

վերլուծությունները դեռևս խոշոր խնդիրների վերհանման վրա չեն կենտրոնանում և կառավարչական որոշումների կայացման համար համապատասխան լուծումներ չեն առաջադրում։

Քոլեջի ՄԿԾ-ներն ընդհանուր առմամբ համահունչ են քոլեջի առաքելությանը, պետության և աշխատաշուկայի պահանջներին։ Դրան են նպաստել համագործակցային կապերը տարածաշրջանի գործատուների հետ և քոլեջի դասախոսական կազմի մասնակցությունը մասնագիտությունների ՊԿՉ-ների մշակմանը, որոնց վերանայման արդյունքում համապատասխանաբար փոփոխությունների են ենթարկվել նաև ՄԿԾ-ները։

Քոլեջում դասախոսների կիրառած դասավանդման մեթոդաբանության մեջ զգալի է ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումը, դրան են նպաստել և՛ ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների ներդնումը, և՛ ամբիոնային դասալսումների իրականացումը։ Սակայն դասավանդման մեջ ստեղծագործական, հետազոտական բաղադրիչի արժևորումը դեռևս արտահայտված չէ։

Ուսանողներին տրվող առաջադրանքները և դրանց գնահատումները իրականացվում են մասնագիտական համատեքստին համապատասխան։ Չնայած դրան առկա է գործող գնահատման համակարգի և ուսումնառության վերջնարդյունքների հետ որոշ խզում, ինչի արդյունքում քոլեջում ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատումը հստակ չէ և կարիք ունի բովանդակային վերանայման։

Քոլեջի կրթական ծրագրերի իրականացման համար առկա է համեմատաբար կայուն դասախոսական կազմ։ Դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում կիրառվող մեխանիզմները, առավելապես՝ դասալսումները, թողել են իրենց դրական ազդեցությունը կրթական գործընթացի բարելավման վրա, սակայն մասնագիտական և լեզվական վերապատրաստումների կարիքը զգալի է։ Քոլեջը չունի պրակտիկ ոլորտից ներգրավված դասավանդողներ, ինչը պայմանավորված է քոլեջում ցածր աշխատավարձով։

Քոլեջում առկա է բավարար նյութատեխնիկական և ռեսուրսային բազա ՄԿԾ-ների իրականացման համար՝ ներառյալ պրակտիկա անցկացնող կազմակերպությունների ռեսուրսները, որոնք օգտագործվում են գործնական, պրակտիկ կարողությունների և հմտությունների ձևավորման համար։

Քոլեջում ներդրված են թափանցիկության ու հաշվետվողականության ապահովման մեխանիզմներ, ինչը նպաստում է հասարակության շրջանում քոլեջի մասին իրազեկվածությանը և հասարակության կողմից շրջանավարտների նկատմամբ վստահությանը։ Ինչի արդյունքում քոլեջը կարողացել է ձևավորել կայուն ուսանողական համակազմ։

Քոլեջում առկա են մեխանիզմներ, որոնց միջոցով վեր են հանվում ուսանողների կրթական կարիքները, ինչը նպաստում է ուսումնական միջավայրի բարելավմանը։ Քոլեջը ծանոթացնում է ուսանողներին կարիերայի հնարավորություններին, վերջերս ձևավորել է շրջանավարտների բազա և հետևում է շրջանավարտների գործունեության հետագծին։ Սակայն արդյունքները դեռևս չեն կիրառվում կրթական ծրագրերի բարելավման նպատակով։ Միևնույն ժամանակ դեռևս զգալի չէ կարիերայի կենտրոնի ազդեցությունը ուսանողների կարիերայի զարգացման և հետագա աշխատանքի տեղավորման վրա։

Քոլեջում առկա չեն դասախոսական անձնակազմի հետազոտական գործունեության խթանման մեխանիզմներ, որոնց ստեղծումը կնպաստեր դասախոսների մասնագիտական աճին, ուսանողների ներգրավմանը համատեղ հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև

ավելի ուժեղ կդարձներ քոլեջում հետազոտություն-ուսումնառություն կապը: Ուսանողներին տրվող հանձնարարությունները պարունակում են հետազոտական, ստեղծագործական տարրեր: Քոլեջի ուսանողները իրականացնում են հետազոտական բնույթի որոշ աշխատանքներ, ուսումնասիրում մասնագիտական ոլորտում առկա այլ փորձեր, սակայն դրանք ինստիտուցիոնալ հիմքի վրա դրված չեն:

Գործատուների խորհրդի առկայության շնորհիվ քոլեջն արդյունավետ համագործակցություն է ծավալում տարածաշրջանի գործատուների հետ, որը հնարավորություն է տալիս քոլեջի ուսանողներին մասնակցել պրակտիկաների, իսկ հետագայում նաև ընդունվել աշխատանքի: Սակայն քոլեջը միջազգայնացման ոլորտում իր ռազմավարական նպատակն իրագործելու համար պետք է ջանքեր գործադրի միջազգային գործընկերներ գտնելու ուղղությամբ, ինչը կնպաստի հավելյալ ռեսուրսների ներգրավմանը, ուսանողների և դասախոսների շարժունությանը, ինչպես նաև նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցությանը, միջազգային լավագույն փորձի տեղայնացմանը:

Քոլեջն իրացնում է հասարակական պատասխանատվությունը՝ արժեքներ ու գիտելիքներ փոխանցելով տարածաշրջանի հասարակության լայն շերտերին:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Գործատուների հետ ակտիվ համագործակցությունը
2. Դասախոսական համեմատաբար կայուն համակազմը
3. ՊԿՉ-ների վերանայման գործընթացում դասախոսական կազմի ներկայացուցիչների ներգրավվածությունը
4. Առաքելությունն ընկալելի և ընդունելի լինելը ներքին և արտաքին շահակիցների համար
5. Տարածաշրջանում քոլեջի կարևոր դերը և նշանակությունը
6. Կառավարման թափանցիկություն և որոշումների կայացման ժամանակ շահակիցների մասնակցությունը
7. ՈԱ մեխանիզմների ներդնումը
8. Ուսանողների կայուն համակազմը և ուսանողների մասնագիտական կողմնորոշման գործող մեխանիզմները
9. Հասարակությանը հավելյալ գիտելիքների (արժեքների) փոխանցման դերակատարությունը տարածաշրջանում

Հաստատության թույլ կողմերն են.

1. Գործատու, պրակտիկ դասախոսների բացակայությունը
2. Ցածր աշխատավարձ և խրախուսման մեխանիզմների բացակայությունը
3. Քոլեջի կողմից կազմակերպվող մասնագիտական վերապատրաստումների բացակայությունը
4. Ռեսուրսների արդիականացման անհրաժեշտությունը
5. Ռազմավարական կառավարման փորձառության պակասը
6. ՈԱ մեխանիզմների գնահատման արդյունավետության պակասը
7. ՄԿԾ-ներում հետազոտական բաղադրիչի թույլ արտահայտվածությունը և դրա պահանջի բացակայությունը

8. Այլ ուսումնական հաստատությունների և միջազգային կառույցների հետ թույլ համագործակցությունը
9. Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտվածությունը:

Խորհրդատվություններ.

Տվյալահենք կառավարում

1. Գնահատել ՌԾ ընթացիկ իրականացումը և հստակեցնել ՌԾ նպատակները, վերջնարդյունքները՝ դարձնելով չափելի: Քոլեջի ստորաբաժանումների պլանները և հաշվետվությունները համապատասխանեցնել ՌԾ-ին:
2. Գործընթացների կառավարման և որոշումների կայացման հիմքում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը:
3. Ներդնել տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմներ, իրականացնել մշտադիտարկում հավաքագրված տվյալների վերլուծության և խնդիրների դուրսբերման նպատակով և դրանց հիման վրա կազմել գործընթացների բարելավման ծրագրեր:
4. Իրականացնել ՈԱ գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ և ՈԱ վերլուծությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դարձնել ներքին և արտաքին շահակիցներին՝ ներգրավելով քոլեջի ՈԱ գործընթացներում:
5. Բարելավել քոլեջում կիրառվող ՈԱ մեխանիզմները իրականացված արդյունավետության վերլուծությունների հիման վրա:

Որակավորումների արժանահավատ շնորհում

1. Մշակել բենչմարքինգի քաղաքականություն և իրականացնել այլ ՄՈՒՀ-երի նմանատիպ ծրագրերի ՄԿԾ-ների համեմատական վերլուծություններ հնարավոր բարելավումների և լավագույն փորձի տեղայնացման համար:
2. Ներդնել ՄԿԾ-ների բարելավման հստակ քաղաքականություն և ցուցիչներ:
3. Սահմանել և ներդնել գնահատման կարգ և չափանիշներ, որով հնարավոր կլինի ապահովել ուսումնառության արդյունքների արժանահավատ գնահատումը:
4. Հնարավորություններ գտնել գնահատված կարիքների հիման վրա դասախոսական կազմի մասնագիտական և լեզվական վերապատրաստումների իրականացման համար:
5. Ուսանողների մոտ պրակտիկ կարողությունների ու հմտությունների ձևավորման և զարգացման համար դասավանդման գործընթացում ներգրավել գործատու-դասախոսներ՝ նպաստելով գործատուների մասնակցությանը ներքոլեջային կրթական գործընթացում:
6. Իրականացնել դասավանդման և ուսումնառության կարիքների վերհանման համար անցկացվող հարցումների ընթացակարգերի, հարցաթերթիկների բովանդակային վերանայում և համալրում:
7. Դիվերսիֆիկացնել քոլեջի ֆինանսական հոսքերը, ստեղծել նյութատեխնիկական բազայի համալրման հնարավորություններ՝ աշխատաշուկայի արդիական պահանջներին համապատասխան մասնագետներ թողարկելու համար:

Երկարաժամկետ զարգացում

1. Մշակել քոլեջի հետազոտության զարգացման համար քաղաքականություն և ընթացակարգեր, սահմանել հետազոտական հետաքրքրություններն ու առանձնահատկություններն արտահայտող ուղղություններ:
2. Ներդնել հետազոտությունների զարգացմանը միտված ծրագրեր և խրախուսել դրանցում դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը:
3. Դուալ ԿԾ-ում հետազոտական տարրեր պարունակող հանձնարարությունների մշակման դրական փորձը տարածել քոլեջի մյուս կրթական ծրագրերում, ներդնել մեխանիզմներ հետազոտություն-ուսումնառություն փոխկապակցման ապահովման համար:
4. Ձեռնարկել քայլեր դիմորդների մասնագիտական կողմնորոշման և շրջանավարտների մասնագիտական աշխատանքի անցնելուն նպաստող միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:
5. Քոլեջում հաշվետվությունները կազմել վերլուծական հիմքով և ներկայացնել ըստ ՌԾ-ի գնահատման առանցքային ցուցիչների և վերջնարդյունքների՝ ապահովելով ՌԾ իրականացման համար գնահատման մեխանիզմի առկայությունը:
6. Ակտիվացնել այլ քոլեջների և միջազգային կառույցների հետ համագործակցության կապերը փորձի փոխանակման և լավագույն փորձի ներդրման համար՝ ընդգրկելով քոլեջից միջազգայնացման համար պատասխանատու աշխատակցի:

_____

Փորձագիտական խմբի ղեկավար
Գագիկ Քթրյան

4 սեպտեմբերի, 2024թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[5] կողմից.

1. **Գագիկ Քթրյան՝** ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, Հայաստանի Եվրոպական համալսարանի դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Օլյա Ավետիսյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
3. **Մարինա Փոթիկյան՝** տնտեսագիտության թեկնածու, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի և ՀՀ ՆԳ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արտակ Խաչատրյան՝** Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Լիանա Ալավերդյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 01.02.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո 08.02.2024թ. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար,

[5] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:

Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 26.04.2024 թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[6]:

Նախնական այց

10.06.2024 թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել ՇՏՊՔ-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2024թ. հունիսի 19-21-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև ավարտական աշխատանքների պաշտպանության, ռեսուրսերի[7] դիտարկում, ինչպես նաև փաստաթղթերի դիտարկում[8] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

---

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

[8] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 2024 թ. օգոստոսի 5-ին: Նախնական զեկույցի վերաբերյալ Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 04.09.2024թ. :

Համակարգող
Լիանա Ալավերդյան

4 սեպտեմբերի, 2024թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետև՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների արդյունքում ՇՏՊՔ-ն բարելավել է ռազմավարական ծրագիրը՝ այն դարձնելով հնգամյա և համապատասխանեցնելով վերջինիս մշակման պահանջներին: ՇՏՊՔ պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2022-2027 թթ. Զարգացման ռազմավարական ծրագրում (այսուհետև՝ ՌԾ): Այն է՝ «նպաստել Շիրակի մարզում մասնագիտական կրթության զարգացմանը, միջազգային մակարդակի նորարական կրթական որակի ապահովմանը՝ շեշտը դնելով ծառայությունների որակի բարելավման, կրթական համակարգի և գործատուների, սոցիալական գործընկեր այլ կազմակերպությունների միջև գործընկերության ապահովման վրա: Որպես իր առաքելության կարևորագույն մաս՝ քոլեջը միտված է դառնալու ուսանողակենտրոն կրթական միջավայր, որն իր շրջանավարտներին պատրաստում է ակտիվ հասարակական կյանքի և ղեկավար դերի համար՝ զարգացող աշխատաշուկայի պահանջմունքներին համապատասխան»: Քոլեջը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակներին համապատասխան: ՌԾ-ով սահմանված են քոլեջի հիմնարար արժեքները, գործունեության հիմնարար սկզբունքները, կանոնադրական նպատակները և գործառույթները, ռազմավարական նպատակները և խնդիրները, այդ ուղղություններով գործողությունները:

ՌԾ նպատակներն են՝ 1. Որակյալ կրթություն, 2. Կառավարման ճկուն համակարգ, 3. Համագործակցության հզորացում, 4. Ֆինանսական կայունություն: ՌԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են նպատակների և խնդիրների իրագործման համար անհրաժեշտ Գործողությունները, Ակնկալվող արդյունքը, Արդյունքի վերահսկում, գնահատումը, Ժամկետը, Պատասխանատուները, Ներդրումները և Ռիսկերը: Բացակայում են ակնկալվող արդյունքների չափման համար սահմանվող հստակ ԳԱՑ-երը: Պլան-ժամանակացույցի մի շարք ակնկալվող արդյունքներ հստակ և չափելի չեն, օրինակ՝ Տնտեսության խթանում, Աշխատանքի արդյունավետության բարձրացում, Բարձր որակավորված աշխատակազմ, Որակյալ կադրային ներուժ և այլն: Քոլեջի ՌԾ-ն կազմվել է տնօրենի մրցույթի ժամանակ ներկայացված զարգացման ծրագրի հիման վրա: ՌԾ մշակման հիմքում չի դրվել քոլեջի փաստացի ներուժի գնահատման վերլուծությունը: Ինչ վերաբերում է արտաքին միջավայրի ուսումնասիրությանը, ապա տնօրենը, նախկինում հանդիսանալով մարզային զբաղվածության կենտրոնի տնօրենը և ունենալով գործնական կապեր տարածաշրջանի գործատուների հետ, տեղյակ է տարածաշրջանի (աշխատաշուկայի) կարիքներից, որոնք արտահայտել է իր ներկայացրած ծրագրում:

ՌԾ-ում առկա են նպատակներ, որոնց ուղղությամբ բավականաչափ քայլեր չեն իրականացվել, և նախորդ տարիների համար ձևակերպված ակնկալվող արդյունքները ձեռքբերված չեն, օրինակ՝ Ֆինանսների պլանավորում ըստ ռազմավարական նպատակների, լրացուցիչ կրթական ծրագրեր, ֆինանսական մուտքեր, ձեռնարկատիրական գործունեության

ծրագիր, ֆինանսական միջոցների ներհոսք, Վերապատրաստված դասախոսական աշխատակազմ, Վերանորոգված ճանապարհ, Քոլեջում ստեղծել հետազոտական խումբ, տարբեր հետազոտական արդյունքներ, ցուցանիշներ:

Ըստ ՇՏՊՔ ինքնավերլուծության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսական և վարչական անձնակազմը, իսկ արտաքին շահակիցները՝ մարզային իշխանությունը, գործատուները, շրջանավարտները, ծնողները: ՌԾ-ն մշակելիս շահակիցների կարիքների վերհանում չի իրականացվել: ՌԾ-ն և պլան-ժամանակացույցը կազմվել են տնօրենի նախընտրական զարգացման ծրագրի հիման վրա՝ վերջինիս չնչին փոփոխություններով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա ներքին շահակիցների հետ ռազմավարական պլանի քննարկում իրականացվել է, սակայն արտաքին շահակիցներ պլանի վերանայման աշխատանքներում չեն ներգրավվել:

ՌԾ կատարողականի գնահատման համար 2024թ-ին տնօրենի կարգադրությամբ ստեղծվել է ՌԾ կենսագործումը, մշտադիտարկումը և գնահատումը պարբերաբար իրականացնելու համար աշխատախումբ, սակայն աշխատախմբի նիստի ներկայացված արձանագրության մեջ վերլուծված չէ ՌԾ կատարողականը, իրականացված կամ չիրականացված գործողությունները, խնդիրներն ու ռիսկերը՝ փոխարենը արձանագրելով, որ բոլոր գործողությունները ընթացքի մեջ են: Որպես այդպիսին, ՌԾ գնահատման մեխանիզմ է դիտարկվում տնօրենի հաշվետվությունը: Սակայն հաշվետվությունները փոխկապակցված չեն ՌԾ նպատակների ու խնդիրների հետ և փաստացի նկարագրում են քոլեջում տարեկան իրականացված գործընթացները: Ինչպես նախորդ հավատարմագրման ժամանակ, այնպես էլ հիմա քոլեջը չի իրականացրել ՌԾ ԳԱՑ-երի բարելավում և արդյունքների պարբերաբար վերլուծություններ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը բարելավել է իր ՌԾ-ն՝ դարձնելով երկարաժամկետ: Մյուս կողմից հատկանշական է այն, որ տնօրենն իր զարգացման ծրագրում հաշվի է առել տարածաշրջանի (աշխատաշուկայի) կարիքները, ինչի շնորհիվ քոլեջի հաստատած ՌԾ-ն և հիմնական ուղղությունները համապատասխանում են տարածաշրջանի կարիքներին: Սակայն փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջի ռազմավարական խնդիրներն ու դրանց իրագործման համար անհրաժեշտ քայլերը կազմվել են առանց քոլեջի ներուժի համակողմանի գնահատման, ինչի հետևանքով սահմանված որոշ ակնկալվող արդյունքներին հասնելը հնարավոր չի եղել:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները, իսկ քոլեջի գործունեությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին, ինչը նպաստում է նրան, որ դրանց իրականացումը մեծ ռիսկեր չի պարունակում:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում առկա չեն ՌԾ կատարողականի վերլուծության հստակ մեխանիզմներ, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ սահմանված նպատակների իրագործման ճանապարհին խնդիրների դուրսբերմանը և դրանց ուղղությամբ արդյունավետ լուծումներ գտնելուն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ մշակվել է քոլեջի զարգացման ՌԾ և պլան-ժամանակացույց, քոլեջի անձնակազմը կիսում է տնօրենի ներկայացրած զարգացման ծրագիրը և հիմնական ուղղությունները, առկա է գործուն կապ տարածաշրջանի և աշխատաշուկայի կարիքների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

ՇՏՊՔ-ի կառավարումն իրականացվում է լիազոր պետական մարմնի, կոլեգիալ կառավարման խորհրդի, գործադիր մարմնի՝ տնօրենի և Մանկավարժական խորհրդի կողմից:

Քոլեջի կազմակերպական կառուցվածքում ներկայացված են ստորաբաժանումների միջև առկա ուղղահայաց կապերը: Քոլեջում գործող խորհուրդների, ստորաբաժանումների գործունեությունը և լիազորությունների շրջանակը սահմանվում է վերջիններիս կանոնակարգերով և ընթացակարգերով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի վարչական անձնակազմի գործառույթները հստակեցված և տարանջատված են, գործառույթների կրկնողություն առկա չէ: Նախորդ հավատարմագրման արդյունքում 2021թ.-ին մշակվել են պաշտոնների անձնագրերը, վերանայվել են քոլեջի գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր: ՌԾ-ով նախատեսվող «Միջազգային համագործակցության կապերի հզորացում» խնդրի իրագործման աշխատանքներն ու պատասխանատվությունը դրված է քոլեջի տնօրենի վրա, չկա այդ հարցերով զբաղվող այլ հաստիքային աշխատակից կամ ստորաբաժանում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում դեռևս չի իրականացվել ֆինանսական համապատասխան պլանավորում՝ գնահատելու համար, թե որքան ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ ՌԾ նպատակների իրականացման համար և դրանց ներդրումն ինչ արդյունավետության կարող է հանգեցնել: Ըստ ռազմավարական գերակայությունների ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության բացակայության խնդիրը առկա էր նաև նախորդ հավատարմագրման ժամանակ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի ՌԾ պլան-ժամանակացույցում նկարագրված չեն ռազմավարական նպատակներին հասնելու և պլանավորված գործողությունների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները: Ֆինանսների բաշխումը քոլեջը իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա, ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարումներ՝ 84,8%, սոցիալական նպաստներ (կենսաթոշակներ)՝ 8%, ծառայությունների և ապրանքների

ձեռք բերման դիմաց վճարումներ՝ 7% (որից ուսումնական նյութերի համար՝ 0,8%) և այլ ծախսեր՝ 0,2%։ Ապրանքների (այդ թվում՝ ուսումնական նյութերի) ձեռքբերումը իրականացվում է՝ հիմք ընդունելով ստորաբաժանումների ներկայացրած զեկուցագրերը։

Դասախոսական և ուսանողական կազմերից ներկայացուցիչներ ընդգրկված են կառավարման խորհրդում, իսկ մանկավարժական խորհրդում՝ դասախոսական ողջ կազմը։ Ի տարբերություն նախորդ հավատարմագրմանը, որտեղ ներքին շահակիցների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում պասիվ էր՝ փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կառավարման խորհրդում ներգրավված ուսանողները և դասախոսները որոշ հարցերում նախաձեռնողականություն են ցուցաբերում կարիքների բարձրաձայնման համար, օրինակ՝ բուֆետի անհրաժեշտության, ուսումնական ռեսուրսների և ուսանողական ժամանցային միջոցառումների վերաբերյալ։ Նիստերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն այլ շահակիցների շրջանում տարածվում է համապատասխան ներկայացուցիչների միջոցով։

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և կարճաժամկետ՝ տարեկան պլանավորումներով։ Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան պլանավորմամբ։ Ստորաբաժանումների պլանների դիտարկումը ցույց տվեց, որ դրանցում նախորդ տարիների համեմատ միջոցառումները հիմնականում կրկնվում են։ Պլանավորման մեջ արտացոլված չեն ՌԾ խնդիրները և դրանց ուղղությամբ պլանավորած քայլերը։ Ընդհանուր առմամբ ստորաբաժանումների աշխատանքային պլաններում սահմանված վերջնարդյունքները չափելի են և համադրելի փաստացի իրականացվող աշխատանքների հետ, սակայն դրանք փոխկապակցված չեն ՌԾ վերջնարդյունքների հետ։ Երկարաժամկետ (ՌԾ-ի) և կարճաժամկետ պլանավորումների փոխկապակցվածության բացակայությունը դիտարկվել էր որպես խնդիր նաև նախորդ հավատարմագրման ժամանակ։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ։ Ստորաբաժանումների միջև փորձի փոխանակման կապերը թույլ են զարգացած։ Մասնավորապես, ամբիոններում առկա են դրական փորձեր, որոնք չեն տարածվել մյուս ամբիոնների վրա, օրինակ՝ ուսումնական ուղեցույցների և հանձնարարությունների շտեմարանների մշակումը SS մասնագիտությունների համար, դիպլոմային աշխատանքների կատարման ուղեցույցը Սոցիալական աշխատանք մասնագիտության համար։ Տարբեր ստորաբաժանումների աշխատանքային պլանները հիմնականում համընկնող գործողություններ չեն պարունակում։

Քոլեջը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ է դիտարկում հաշվետվությունները։ Հաշվետվությունները ներկայացվում են ըստ ենթակայության ներքևից վերև տարեկան կտրվածքով՝ ըստ ստորաբաժանումների կանոնակարգերի։ Հաշվետվությունների դիտարկումը, այդ թվում տնօրենի, ցույց է տալիս, որ դրանք հիմնականում նկարագրողական բնույթ ունեն և վերլուծական բաղադրիչը արտահայտված չէ։ Առկա չէ ինստիտուցիոնալ մոտեցում և պահանջ վերլուծական հենքով հաշվետվությունների կազմման համար։

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների փաստաթղթավորված ուսումնասիրություն չի կատարվել։ Առկա չէ նախորդ ռազմավարական ծրագրի կատարողականի վերլուծություն։ Ավելին, գործող ՌԾ-ի տարեկան կատարողականի վերլուծություն նույնպես չի իրականացվում։ Մյուս կողմից չի վերլուծվել նաև նախորդ

հավատարմագրման արդյունքում հաստատված թերությունների վերացման ծրագրի կատարողականը:

Քոլեջը ՈԱԿ-ի հարցումների միջոցով իրականացնում է ներքին խնդիրների վերհանում, օրինակ, բացահայտվել են կարիքներ՝ պրակտիկայի ժամերի ավելացման և արդյունավետության բարձրացման, նյութատեխնիկական բազայի թարմացման, դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման և այլնի վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ խնդիրների լուծման համար քոլեջը փորձել է իրականացնել քայլեր, սակայն խնդիրները դեռ առկա են:

Որպես քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն ներկայացված է Կարիերայի կենտրոնի իրականացրած աշխատաշուկայի ուսումնասիրությունը, որը դիագրամների տեսքով ներկայացնում է 2021-2023թթ. մարզերում և Երևանում աշխատանքների բաշխվածությունը, մարզային հաստիքների ակտիվությունը և ամենապահանջված փափուկ հմտությունները: Ուսումնասիրությունը չի փոխկապակցվել քոլեջի մասնագիտությունների հետ, խնդիրներ դուրս չեն բերվել և եզրակացություններ նշված չեն: Արտաքին շահակիցների (գործատուներ, շրջանավարտներ) հետ հետադարձ կապ ապահովելու նպատակով Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվել են հարցումներ, սակայն դրանցում ներառված հարցերը 4-ն են և ունեն ընդհանուր ձևակերպումներ, իսկ գործատուների մասնակցության ցուցանիշը շատ ցածր է (ընդամենը 6 գործատու):

Ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության և ռիսկերի վերհանման համար կիրառվող այլ գործիքակազմ քոլեջը դեռևս չունի: Նախորդ հավատարմագրման արդյունքում ևս փորձագիտական խումբը անհրաժեշտ էր համարել, որ քոլեջը պարբերաբար ուսումնասիրի և վերլուծի արտաքին և ներքին միջավայրերից ստացվող տեղեկատվության քանակական և որակական տվյալները, սակայն դեռևս ամբողջական, համապարփակ վերլուծություններ չեն իրականացվել:

Քոլեջը դեռևս փորձ չի կատարել բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ սկզբունքը: Ավելին, ՊԻԳԲ սկզբունքի կիրառումը ամրագրված չէ քոլեջի որևէ հաստատված փաստաթղթում: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացները պլանավորման կամ իրականացման փուլում են: Հարկ է նշել նաև, որ ՊԻԳԲ սկզբունքի ներդրման անհրաժեշտությունը շեշտադրվել էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում:

ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության գնահատումը քոլեջում իրականացվում է քննարկումների և հարցումների միջոցով, որոնք կիրառվում են տվյալների հավաքագրման և վերլուծության համար: Սակայն այդ մեխանիզմների արդյունավետությունը դեռ չի գնահատվել:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվությունը հրապարակվում է ներքոլեջային և գործատուների հետ հանդիպումների ժամանակ: Որոշ փաստաթղթեր (ՌԾ, տնօրենի հաշվետվություններ, ՈԱ ձեռնարկ) հրապարակված են քոլեջի կայքէջում: Սակայն հրապարակումները գնահատող մեխանիզմներ առկա չեն: Փորձագիտական այցի ժամանակ պարզվեց, որ ներքին և արտաքին շահակիցները տեղյակ չեն իրենց հարցումների արդյունքների ընդհանրական վերլուծություններից:

Քոլեջն ունի նաև ֆեյսբուքյան էջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, սակայն, քոլեջի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում չի իրականացվում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո մշակել է պաշտոնի անձնագրերը և մի շարք կանոնակարգեր, ինչը նպաստել է ստորաբաժանումների միջև աշխատանքի և պատասխանատվությունների հստակ բաշխմանը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ միջազգայնացման հարցերով հաստիքային աշխատակցի բացակայությունը և միայն տնօրենի անմիջական պատասխանատվության տակ լինելը, վտանգում է ռազմավարական խնդրի իրագործմանը: Վերջինիս մասին է վկայում նաև մինչ այժմ այդ ուղղությամբ կատարված աշխատանքների և ձեռքբերումների սակավության փաստը:

Փորձագիտական խումբը մտագոհիչ է համարում այն, որ քոլեջում բացակայում է ՌԾ նպատակներին հասնելու համար նախատեսված միջոցառումներին համապատասխան ֆինանսների պլանավորման քաղաքականությունը, ինչը կարող է վտանգել ՌԾ իրականացմանը և նախանշված ուղղությամբ քոլեջի զարգացմանը: Ավելին, ՌԾ-ին համապատասխան ֆինանսական պլանավորումը կնպաստեր ծրագրի իրատեսականության բարձրացմանը և նպատակների, խնդիրների հստակեցմանը քոլեջի առկա հնարավորությունների և փաստացի իրավիճակին համապատասխան:

Ռազմավարական պլանավորման և ստորաբաժանումների տարեկան պլանների միջև առկա խզումը խոչընդոտում է ՌԾ հստակ իրականացմանը և ՌԾ վերջնարդյունքների ձեռքբերմանը: Արդյունքում, քոլեջի ընթացիկ գործունեությունը անմիջապես փոխկապակցված չէ ՌԾ-ի հետ և չի նպաստում վերջինիս ամբողջական իրագործմանը: Դա է վկայում նաև այն, որ քոլեջը դեռևս չի իրականացրել ՌԾ ընթացիկ կատարողականի վերլուծություն և մշտադիտարկում՝ չնայած ՌԾ պլանավորած գործողությունների զգալի մաս պետք է արդեն իրականացված կամ որոշակի ընթացքի փուլում լիներ: Իսկ նախորդ հավատարմագրման արդյունքում հաստատված թերությունների վերացման ծրագրի հետևողական իրականացման կամ դրա կատարողականի վերլուծության բացակայությունը չի նպաստել նախանշված որոշ թերությունների ուղղությամբ քայլերի ձեռնարկմանը:

Քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է ներքին շահակիցների համար թափանցիկ և հաշվետվողական մոտեցմամբ, ինչը նպաստում է անձնակազմի համախմբմանը և, որպես թիմ, ձևավորմանը: Սակայն ստորաբաժանումների միջև գործառնական կապերի թույլ լինելը խոչընդոտում է փորձի փոխանակմանը և ձևավորված լավ փորձի տարածմանը քոլեջում:

Վերլուծական հենքով հաշվետվությունների մշակման փորձի և դրա ինստիտուցիոնալ պահանջի բացակայությունը հանգեցրել է դրանց արդյունավետության նվազմանը և, արդյունքում, չի նպաստել քոլեջի հիմնական խնդիրների ու ռիսկերի բացահայտմանը: Միևնույն ժամանակ ՊԻԳԲ շրջափուլի ներդրված չլինելը խոչընդոտել է գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Քոլեջը իր վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրություն և ռիսկերի վերհանում համակարգված ձևով չի իրականացնում: Դրա վկայությունն է ՌԾ մշակման հիմքում նման փաստաթղթավորված ուսումնասիրության բացակայությունը: Չնայած քոլեջն իրականացնում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանում հարցումների միջոցով, սակայն դրանց արդյունավետությունը և արդյունքների արժանահավատությունը

(կապված մասնակիցների թվի հետ) գնահատված չէ: Ավելին, ներքին և արտաքին շահակիցների անտեղյակությունը իրենց հարցման արդյունքների ընդհանուր պատկերից նվազեցնում է հարցումների արդյունավետությունը և դրանց նկատմամբ վստահության մթնոլորտի ձևավորումը:

Ընդհանուր առմամբ քոլեջի կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման հստակ մեխանիզմների բացակայությունը չի նպաստում քոլեջում իրականացվող գործընթացների և դրանց կառավարման որոշումների թափանցիկությանը արտաքին շահակիցների համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում ռազմավարական կառավարումը դեռ նոր է ներդրվում, կառավարումը հիմնված չէ տվյալների հավաքագրման և որոշումների կայացման կայուն մեխանիզմների վրա, նախորդ հավատարմագրման արդյունքում թերությունների վերացման ծրագրի կատարողականը վերլուծված չէ, ՊԻԳԲ սկզբունքը ներդրված չէ գործընթացների կառավարման մեջ, կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության և դրանց հրապարակումների որակը գնահատող մեխանիզմներ ներդրված չեն, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն չի բավարարում Չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

ՇՏՊՔ-ն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթության հիմքով՝ 3 մասնագիտություններով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, համակարգչային ցանցեր», «Հագուստի մոդելավորում և նախագծում», միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով՝ թվով 2՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Սոցիալական աշխատանք» մասնագիտություններով, ինչպես նաև նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով առկա ուսուցում հիմնական կրթական հիմքով թվով 2 մասնագիտություններով՝ «Համակարգիչների շահագործում» և «Խոհարարական գործ»:

2023-2024 ուս. տարում քոլեջը կատարել է ընդունելություն նաև միջին մասնագիտական կրթական ծրագրով (միջնակարգ լրիվ կրթությամբ)՝ «Զբոսաշրջություն», նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրով (միջնակարգ լրիվ կրթությամբ)՝ «Կարի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտություններով: Լիցենզավորված մասնագիտություններից «Գովազդ» մասնագիտությամբ նախորդ 2 տարիներին խումբը չի համալրվել՝ պայմանավորված միայն վճարովի տեղերի առկայությամբ:

Ըստ քոլեջի ղեկավարության՝ նոր մասնագիտությունների ներդրման համար հիմք է հանդիսացել աշխատաշուկայի ուսումնասիրությունը, սակայն մասնագիտությունների ներդրումը հիմնավորող նմանատիպ ուսումնասիրությունների վերաբերյալ փաստաթղթավորված վերլուծություններ քոլեջում առկա չեն:

Կրթական ծրագրերից 2018թ.-ից «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», իսկ 2019թ.-ից «Զբոսաշրջություն» մասնագիտությամբ ուսուցումը կազմակերպվել է դուալ ձևաչափով:

Քոլեջի ՄԿԾ-ները մշակվել են գործող ՊԿՉ-ների հիման վրա, և վերանայվել են ՊԿՉ-ների վերանայման արդյունքում: ՊԿՉ վերջին վերանայումներն իրականացվել են 2023 թ-ին: Քոլեջի դասախոսական կազմից ներկայացուցիչները մասնակցել են համապատասխան մասնագիտությունների ՊԿՉ-ների մշակմանը և վերանայմանը: Մոդուլային ծրագրերը նկարագրված են ըստ ակնկալվող արդյունքների:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից, ուսումնական պլաններում առկա են նաև ընտրովի և նախասիրական առարկաներ, որոնք սակայն ընտրվում և ֆիքսվում են ուս. տարվա սկզբում ամբիոնների վարիչների կողմից՝ կապված դրանց կարևորության և մասնագետի առկայության հետ:

ՄԿԾ-ներում փոփոխությունները հիմնականում տեղի են ունենում ՊԿՉ-ների փոփոխման արդյունքում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ երբեմն հաշվի են առնվել նաև գործատուների առաջարկները, օրինակ՝ ընտրովի առարկաների ցանկում Web ծրագրավորման առարկայի ավելացման հետ կապված:

Ուս. պլաններում առկա են պրակտիկայի հետևյալ տեսակները. ուսումնական պրակտիկաներ՝ տեսական և առանց տեսական ուսուցման, արտադրական/մասնագիտական և նախաավարտական պրակտիկաներ: Պրակտիկայի ժամեր ուս. պլանով նախատեսված են 1-ին կամ 2-րդ կուրսից սկսած՝ կախված մասնագիտությունից: Փորձագիտական այցից պարզվեց, որ «Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, համակարգչային ցանցեր» մասնագիտության դեպքում նախորդ տարիներին ուսանողները պրակտիկան անց են կացրել քոլեջում, նույն դասախոսի մոտ՝ գործնական դասի ձևաչափով:

Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ օրագրերը լրացնում են ուսանողները պրակտիկայի վայրում գործատուի ներկայացուցչի վերահսկողությամբ, պրակտիկայից վերադառնալիս հաստատվում են քոլեջի պրակտիկայի ղեկավարի կողմից: Օրագրերում լրացվում են այն աշխատանքները, որոնց մասնակցել կամ հետևել է ուսանողը պրակտիկայի վայրում: Դրանք ոչ միշտ են փոխկապակցվում մոդուլային ծրագրով սահմանված վերջնարդյունքների հետ: «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ դուալ կրթությունը իրականացվում է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում (GTC): Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա քոլեջն իրականացրել է պրակտիկաների արդյունավետության գնահատում՝ հարցաթերթիկների մեջ ներառելով հարցեր պրակտիկաների հետ կապված, սակայն արդյունքների հիման վրա բարելավումներ չեն իրականացվել:

Քոլեջում առկա է միասնական մոտեցում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդների ընտրության հարցում: Դասախոսն ինքն է ընտրում մեթոդը ըստ թեմայի և վերջնարդյունքի: Քոլեջը իրականացրել է մոդուլների/առարկայական ծրագրերի վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների քարտեզագրում, սակայն մեթոդների ցանկը հիմնականում կրկնվում է տարբեր

վերջնարդյունքների համար։ Կիրառվող մեթոդների արդյունավետությունը գնահատվում է դասալսումների միջոցով, որտեղ կարևորվում են ուսանողակենտրոն ուսուցման մեթոդները։ Ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումներ առկա են դասախոսների կիրառած դասավանդման մեթոդաբանության մեջ, օրինակ ուսանողների առաջարկով դասավանդման մեթոդի փոփոխման, ուսանողների նախաձեռնությամբ ինքնուրույն աշխատանքի թեմաների ընտրության հետ կապված և այլն։

Դասավանդման ընթացքում դասախոսները կարևորում են ուսանողների ինքնուրույն աշխատանքի իրականացումը, սակայն ստեղծագործական և հետազոտական կարողությունների զարգացումը որպես պահանջ ձևակերպված չէ։ Գործատուների հետ հանդիպման ժամանակ պարզվեց, որ գործատուները կարիք են տեսնում կիրառվող մեթոդների, ուսումնական նյութերի և տեխնիկայի արդիականացման, սակայն ընդհանուր առմամբ բավարարված են քոլեջի շրջանավարտների ստացած կրթությամբ։

Քոլեջում որպես այդպիսին գնահատման կարգ առկա չէ։ Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա են և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր։ Մոդուլային ծրագրերում յուրաքանչյուր արդյունքի համար ներկայացված են կատարման չափանիշները և գնահատման միջոցը, որը կարող է լինել հարց ու պատասխանի, գործնական աշխատանքների, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով։ Գործնականում գնահատումը ներդրված չէ ըստ ուսումնառության արդյունքների՝ մատյաններում գնահատումն իրականացվում է ըստ մոդուլների, այլ ոչ ըստ ուսումնառության արդյունքների։ Մոդուլների շրջանակներում հիմնականում պրակտիկայի ընթացքում ուսանողներին տրվող հանձնարարականները պարունակում են ինքնուրույն ստեղծագործական բաղադրիչ, ինչպես օրինակ՝ ինքնուրույն ծրագրային կոդի մշակում, սոցիալական դեպքի վարում և այլն։ Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ ամփոփվում են, առկա է կիսամյակային ամփոփիչ հարցաշար։ Որպես հետազոտական տարրեր պարունակող աշխատանքներ, քոլեջը դիտարկում է կուրսային և դիպլոմային աշխատանքները, սակայն դրանց գնահատման համար շեշտադրված չէ հետազոտական բաղադրիչի կարևորությունը, ինչպես օրինակ՝ ‹‹Սոցիալական աշխատանք›› ՄԿԾ-ի դիպլոմային աշխատանքների կատարման ուղեցույցում։

Քոլեջում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն։ Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են բողոքարկել իրենց գնահատականը, դրա համար ստեղծվում է հանձնաժողով և մոտ 1 շաբաթ ժամանակ է տրվում ուսանողին քննության վերահանձնման համար։ Գնահատականի բողոքարկման դեպքեր գրանցվել են, որոնց արդյունքում գնահատականները բարձրացվել են։

Նախորդ հավատարմագրման խորհրդատվություններից էր՝ «Հավաքագրել, համակարգել ըստ մասնագիտությունների հանձնարարականները, ստեղծելով մասնագիտական կրթական վերջնարդյուքների ձեռքբերման համար անհրաժեշտ հանձնարարականների շտեմարան»։ Այս ուղղությամբ քոլեջը մշակել է մասնագիտական մոդուլների համար ձևաչափ, որտեղ յուրաքանչյուր վերջնարդյունքին համապատասխան ներկայացված են ուսանողներին տրվող հանձնարարականները։ Մասնավորապես, «Սոցիալական աշխատանք» մասնագիտության դեպքում՝ «Սոցիալական աշխատանքի մեթոդներին տիրապետում» վերջնարդյունքի համար նախատեսված հանձնարարականներից է՝ «Ներկայացնել անհատ-հիմնախնդիր-իրավիճակ համակարգի հետազոտման, գնահատման

և խորհրդատվության անհատական սոցիալական աշխատանք», «Ներկայացնել մի քանի իրավիճակներ, կատարել ընտրություն՝ որ մեթոդներով ես աշխատելու» և այլն:

«Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության պարագայում «Հագուստի հիմքի գծագրի կառուցման հմտություններ» մոդուլի շրջանակներում «Կառուցել ուսային հագուստի հիմքի գծագիր» վերջնարդյունքի ձևավորման համար նախատեսված են «Կառուցել կանացի ուսային հագուստի հիմքի գծագիր», «Կառուցել տղամարդու ուսային հագուստի հիմքի գծագիր» հանձնարարականները:

‹‹Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում›› մասնագիտության դեպքում «Ծրագրավորման հիմունքներ և կիրառություն» մոդուլի շրջանակներում նախատեսվել են Java ծրագրավորման լեզվի կիրառմամբ, ճյուղավորված ալգորիթմներով, ցիկլային ալգորիթմներով ծրագրերի կազմում, զանգվածների մշակման ալգորիթմների ծրագրերի կազմում և ֆունկցիայի աշխատանքի սկզբունքների նկարագրման թեմաներով հանձնարարականների կատարում:

Քոլեջի որոշ մասնագիտություններով ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ քննություն (մասնավորապես՝ ‹‹‹Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր, համակարգչային ցանցեր›› և այլն), իսկ մյուսներով՝ դիպլոմային աշխատանք/նախագիծ (մասնավորապես՝ ‹‹Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում›, ‹‹Սոցիալական աշխատանք›› և այլն): Պետական ամփոփիչ քննությունների հարցաշարերում գերակշռում են տեսական հարցերը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դիպլոմային աշխատանքները հիմնականում ներառում են տեսական նյութ և ուսանողի կողմից պրակտիկայի ընթացքում կամ ինքնուրույն իրականացրած հետազոտական աշխատանքը:

Քոլեջում հաստատված չէ գրագողության կանխարգելման կարգ, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2022-2023 ուս. տարում կարիերայի և որակի պատասխանատուները ‹‹Ակադեմիական ազնվություն›› թեմայով 2-օրյա դասընթաց են անցկացրել ուսանողների համար:

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում: Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում: Որպես այդպիսին, պրակտիկայի գնահատման չափանիշներ սահմանված չեն:

Քոլեջը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն: Վերը նշված խնդիրն արձանագրվել էր նաև նախորդ հավատարմագրման ժամանակ: Սակայն, փորձագիտական այցից պարզվեց, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ պարբերաբար քննարկումներ են տեղի ունենում համագործակցող գործատուների հետ, այդ թվում՝ տնօրենին կից գործատուների խորհրդում, որոնց հիման վրա առկա են ՄԿԾ բարելավման օրինակներ, մասնավորապես՝ նոր առարկաների ներդրման, պրակտիկ ժամերի անցկացման արդյունավետության բարձրացման հետ կապված: Միջազգային փորձի ուսումնասիրություն չի իրականացվել, ուսանողների և դասախոսների շարժունության նախադեպեր առկա չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի դասախոսական կազմը մասնակցություն է ունենում մասնագիտությունների ՊԿՉ-ների մշակմանը, դրանց վերանայման արդյունքում համապատասխանաբար փոփոխությունների են

ենթարկվում նաև ՄԿԾ-ները, և միևնույն ժամանակ համագործակցային կապերը տարածաշրջանի գործատուների հետ նպաստում են քոլեջի ՄԿԾ-ների համապատասխանեցմանը պետության և աշխատաշուկայի պահանջներին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի կողմից պրակտիկայի ժամերի կարևորումը և դրան համապատասխան հնարավորինս ժամերի տրամադրումը, այնուամենայնիվ ուսանողները կարիք են զգում պրակտիկայի ժամերի շատացման՝ պայմանավորված գործնական հմտությունների ձևավորման պակասով: Մյուս կողմից, առկա է կազմակերպվող պրակտիկայի արդյունավետության բարձրացման խնդիր, մասնավորապես՝ պրակտիկայի ընթացքի վերահսկման, թեմաների պլանավորումը ակնկալվող արդյունքների հետ փոխկապակցման, ինչպես նաև դրանց ձեռքբերման գնահատման հստակ մեխանիզմների ներդրման հետ կապված, ինչը խոչընդոտում է պրակտիկ հմտությունների ձևավորմանը: Պրակտիկան քոլեջում դիտարկվում է, որպես ուսանողների մոտ գործնական, պրակտիկ հմտությունների և կարողությունների ձևավորման հիմնական բաղադրիչ, ուստի դրա պակաս արդյունավետությամբ իրականացումը վտանգում է մասնագիտական կայացմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջում դասախոսների կիրառած դասավանդման մեթոդաբանության մեջ զգալի է ուսանողակենտրոն ուսուցման մոտեցումը, դրան են նպաստել և՛ ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների ներդնումը, և՛ ամբիոնային դասալսումների իրականացումը: Սակայն դասավանդման մեջ ստեղծագործական, հետազոտական բաղադրիչի կարևորումը կնպաստեր ուսանողների մոտ հետազոտական հմտությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը փորձել է մշակել յուրաքանչյուր մասնագիտական մոդուլի վերջնարդյունքին համապատասխան հանձնարարականների ցանկ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել դրանց ձեռքբերումը: Սակայն, փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում այն, որ քոլեջում ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատումը հստակ չէ և կարիք ունի բովանդակային վերանայման, կարիք կա սահմանելու ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ և պրակտիկայի գնահատման չափանիշներ, որոնց բացակայության հետևանքով առկա է գործող գնահատման կապի խզում ուսումնառության վերջնարդյունքների հետ:

Փորձագիտական խումբը կարևորում է ՄԿԾ-ների վերանայման և բարելավման համար գործատուների հետ համագործակցության դրական փորձը, սակայն քոլեջում ՄԿԾ-ների մշտադիտարկման և բենչմարքինգի հստակ մեխանիզմների բացակայությունը խոչընդոտում է այլ նմանատիպ հաստատությունների և կրթական ծրագրերի դրական փորձի փոխանակմանը, չի նպաստում միջազգայնացմանը, ուսանողների և դասախոսների շարժունության հիմքերի ստեղծմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ՄԿԾ-ները համահունչ են առաքելությանը և ՊԿՉ-ներին, պարբերաբար վերանայվում և բարելավվում են՝ ՊԿՉ-ների վերանայման և գործատուների առաջարկությունների հիման վրա, առկա են ուսանողակենտրոն ուսուցման տարրեր, գործատուներն ընդհանուր առմամբ գոհ են քոլեջի շրջանավարտների ստացած կրթությունից, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 3-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

ՇՏՊՔ-ն դիմորդների ընդունելության գործընթացը իրականացնում է՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Ուսանողների հավաքագրման նպատակով քոլեջն իրականացնում է մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ՝ այցելություններ դպրոցներ, քոլեջում առկա ՄԿԾ-ների մասին տեղեկատվության տեղադրում ֆեյսբուքյան էջում և կայքէջում, բաց դռների օրեր: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա քոլեջն իրականացրել է ուսանողների հավաքագրման արդյունավետության գնահատում հարցումների միջոցով, սակայն դրանց վերլուծությունը ազդեցություն չի ունեցել գործընթացի բարելավման վրա: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ դիմորդների գերակշռող մասը ընդունվել է ծանոթի խորհրդով: Ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավված են՝ Մասնագիտական կողմնորոշման ու կարիերայի կենտրոնի պատասխանատուն և քոլեջի դասախոսական կազմը:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թիվը կայուն է, նկատվում է չնչին աճ SS մասնագիտությունների գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է արդյունավետ ընդունելության մեխանիզմներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ անվճար տեղերը լրացվում են, սակայն վճարովիները թերլրացված են: Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 328 ուսանող:

Յուրաքանչյուր ուս. տարվա սկզբում կուրսղեկը և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնում են իրենց պարտականություններին և իրավունքներին՝ ըստ Ուսանողների ներքին կարգապահական կանոնների կանոնակարգի:

Վերջին 5 տարիների ուսանողների հեռացումների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում իրականացվել են անձնական դիմումի համաձայն և ըստ կուրսղեկի զեկուցագրի: Այս ուղղությամբ քոլեջը աշխատանքներ չի իրականացրել՝ հեռացումները կապելով օբյեկտիվ պատճառների հետ, ինչպես օրինակ՝ արտագաղթ, սոցիալական վիճակ, աշխատատեղերի սակավություն տարածաշրջանում:

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է մեծամասամբ ՈԱ պատասխանատուի և կուրսղեկների միջոցով: Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ՝ դիտարկվում են ՈԱ կենտրոնի կողմից անցկացվող հարցումները, տարբեր խորհուրդներում ուսանողների ընդգրկվածությունը և «Առաջարկությունների և բողոքների» արկղիկը: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մի շարք դեպքերում տեսանելի է վերհանված կարիքների և բարելավման նպատակով

նախատեսված գործողությունների միջև կապը, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները չեն իրազեկվում անցկացվող հարցումների վերլուծության արդյունքներից։

Փորձագիտական խմբի ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ հարցումներին ոչ բոլոր ուսանողներն են մասնակցում։ Հարցումների արդյունքները վերլուծվել են, սակայն ուսանողները հետագա քայլերի մասին չեն տեղեկացվել։ Խնդիրներ ունենալու դեպքում ուսանողները դիմում են կուրսղեկներին, որոնք նաև զբաղվում են ուսանողների կրթական կարիքների վերհանմամբ։

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում օղակ է հանդիսանում նաև ՈւԽ-ն։ Յուրաքանչյուր ամիս ՈւԽ ներկայացուցիչների կողմից բացվում է «Առաջարկությունների և բողոքների» արկղը և Դաստիարակչական գծով փոխտնօրենի գլխավորությամբ քննարկվում են ներկայացված անանուն առաջարկությունները։

Քոլեջում իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց։ Քոլեջը չի իրականացնում խորհրդատվությունների արդյունավետության և ուսանողների կողմից դրանց բավարարվածության գնահատում, սակայն ըստ ինքնավերլուծության՝ նրանց 65%-ն ընդգրկված է այդ պարապմունքներում։

Ուսանողների օտար լեզվի մակարդակի բարելավման համար քոլեջը դիմում է ներկայացրել Խաղաղության կորպուսին (Volunteer Request Form Peace Corps TEFL) անգլերեն դասավանդող կամավոր հրավիրելու նպատակով։ Դասընթացները մեկնարկելու են 2024թ.-ի հուլիսի 1-ից։

Չնայած նրան, որ չկա վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ, սակայն սահմանված է ժամանակացույց, և ուսանողներն ազատ են դիմելու իրենց հուզող հարցերով։ Քոլեջը հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի՝ ուսանողների 85%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 80%-ը բավարարված է այդ ծառայություններից։

Քոլեջում առկա է ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող ստորաբաժանում, որը գործում է 2013թ.-ից։ Կարիերայի ստորաբաժանումը իրականացնում է որոշակի աշխատանքային հմտությունների ձեռքբերմանն ուղղված դասընթացներ, շրջանավարտների զբաղվածության տվյալների հավաքագրում։ Ուսանողները Կարիերայի կենտրոնում սովորում են ինքնակենսագրություն (CV) կազմել։

Քոլեջը ունի համաձայնություն Գյումրու Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ։ Կարիերայի պատասխանատուն կուրսղեկների միջոցով թափուր աշխատատեղերի վերաբերյալ պարբերաբար իրազեկում է շրջանավարտներին։ Ինչպես նախորդ հավատարմագրման ժամանակ, այնպես էլ դրանից հետո կարիերայի պատասխանատուի կողմից չի իրականացվել իր գործունեության արդյունքների հստակ վերլուծություն (ԻՎ-ում և փորձագիտական այցի ժամանակ տարբեր ղեկավար անձանց ներկայացրած շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները չէին համընկնում), չեն ներկայացվել վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները, ովքեր աշխատանքի են անցել կարերայի պատասխանատուի օժանդակությամբ։ Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 67 շրջանավարտներից 13-ը շարունակում են ուսումը բուհերում, 27-ը աշխատում են, որից 10-ը՝ իրենց մասնագիտությամբ։ Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն ցուցանիշն ունի

«Խոհարարական գործ» մասնագիտությունը՝ 38% մասնագիտությամբ աշխատող շրջանավարտներով: Քոլեջի կողմից վերջերս ստեղծվել է շրջանավարտների բազա:

Ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում իրականացվում է դիպլոմային աշխատանքի/նախագծի, կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների շրջանակներում: Դասախոսների կողմից որպես հետազոտական աշխատանք դիտարկվում են ուղեցույցների մշակումը, ինչը առկա էր ՏՏ մասնագիտությունների դեպքում, սակայն այդ մշակումներին ուսանողները չեն ներգրավվել:

Քոլեջում գործում է ուսանողական խորհուրդ (ՈւԽ)՝ հաստատված կանոնակարգով, որին անդամակցում են բոլոր կուրսերի ավագները և ավագների օգնականները, ինչպես նաև այլ ակտիվ ուսանողներ: ՈւԽ նիստերը գումարվում են հիմնականում ամեն ամիս, որոնց պարտադիր մասնակցում են քոլեջի դաստիարակչական գծով տեղակալը և ՈԱ պատասխանատուն:

Ուսանողական խորհուրդը բաղկացած է 22 անդամից: ՈւԽ նիստերի ժամանակ քննարկվում և պլանավորվում են ապագայում կատարվելիք մրցույթները, ժամանցային և տոնական միջոցառումները: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: Փորձագիտական այցից պարզ դարձավ նաև, որ ՈւԽ աշխատանքների իրազեկման մասին միջոցառումները սակավ են: Փորձագիտական այցի ժամանակ պարզ դարձավ, որ ուսանողների գերակշռող մասը տեղյակ չի ուսանողական խորհրդի բուն նշանակությունից, այն հիմնականում զբաղված է միջոցառումների կազմակերպմամբ և չի ընկալվում որպես ուսանողների շահերը ներկայացնող և պաշտպանող անկախ մարմին: Վերջինս արձանագրված էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների միջոցով: Հարցումների անցկացման կանոնակարգ քոլեջում առկա չէ, արդյունավետության գնահատում չի իրականացվել: Վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսանողների կողմից վերհանված խնդիրները հիմնականում վերաբերում են պրակտիկաների քանակի ավելացմանը, դասախոսների դասավանդման մեթոդներին և բուֆետի բացակայությանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում դիմորդների հավաքագրման համար քոլեջի իրականացրած տարաբնույթ միջոցառումները: Սակայն փորձագիտական խմբի դիտարկմամբ քոլեջը կիրառվող մեխանիզմների արդյունավետության գնահատում իրականացնելու կարիք ունի՝ ինչը հնարավորություն կտա բարձրացնել կիրառվող մեխանիզմների արդյունավետությունը, որի արդյունքում հնարավորություն կլինի բարձրացնել քոլեջի գրավչությունը և լրացնել վճարովի տեղերը:

Չնայած նրան, որ քոլեջում որպես կարիքների վերհանման մեխանիզմ ներդրվել են հարցումները, դրանք պարբերաբար և համակարգված ձևով են իրականացվում, սակայն հարցումներին մասնակցության ցածր ցուցանիշները ոչ միշտ են կարող արժանահավատ տվյալների հանգեցնել:

Դրական է այն, որ քոլեջը կազմակերպում է նախասիրական դասընթացներ և իրականացնում խորհրդատվություններ, ինչը նպաստում է ուսանողների ուսումնառության

արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես ուսանողների օտար լեզվի մակարդակի բարձրացման համար անգլերենի կամավոր դասավանդողի ներգրավումը հնարավորություն կտա ուսանողների ավելի մեծ քանակ ներգրավել միջազգային մրցույթներին և այլ միջոցառումներին, ինչպես նաև օգտվել արտասահմանյան գրականությունից:

Քոլեջի Կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող ուսանողների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության մեխանիզմները հստակեցման կարիք ունեն՝ ճշգրիտ տվյալների դուրսբերման և խնդիրների վերհանման տեսանկյունից: Տարբեր փաստաթղթերում ներկայացված երբեմն իրարամերժ տվյալները խոչընդոտում են քոլեջի ղեկավար կազմի մոտ շրջանավարտների մասնագիտական զբաղվածության ընդհանուր պատկերի ձևավորման և այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկմանը: Մյուս կողմից դեռևս զգալի չէ Կարիերայի կենտրոնի ազդեցությունը ուսանողների կարիերայի զարգացման և հետագա աշխատանքի տեղավորման վրա:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում ուսանողների իրավունքների պաշտպանության համար գործում է կուրսղեկների ինստիտուտ, այնուամենայնիվ մտահոգիչ է այն, որ ուսանողական խորհուրդը դեռևս չի դիտարկվում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության համար օղակ: Մյուս կողմից, ՌԱԽ նիստերին դաստիարակչական աշխ. գծով փոխտնօրենի և ՌԱ պատասխանատուի պարտադիր մասնակցությունը կարող է խոչընդոտել ՌԱԽ անկախությանը և ուսանողների կողմից ազատ կարծիք արտահայտելուն:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ուսանողների դիպլոմային, կուրսային և ինքնուրույն աշխատանքներում կան հետազոտական տարրեր, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ այդ աշխատանքների ուղղորդումը և համախմբումը դասախոսների ներգրավմամբ քոլեջի հետազոտական ուսումնասիրություններում ավելի արդյունավետ և նպատակային կդարձնի դրանք:

Չնայած քոլեջն իրականացնում է գործուն քայլեր կրթական ծառայությունների գնահատման ուղղությամբ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ հարցաթերթիկները և հարցումների անցկացման ընթացակարգը բարելավման կարիք ունեն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է ուսանողների կայուն համակազմ, ուսանողների ընդունելությունը կանոնակարգված է, գործում են ուսանողների կարիքների վերհանման և իրավունքների պաշտպանության մեխանիզմներ, իրականացվում են խորհրդատվական, և կարիերայի ուղղորդման ծառայություններ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 4-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

Ըստ ՇՊՏՔ-ի 2022-2027թթ.-ի ՌԾ-ի՝ քոլեջն իր առջև նպատակադրել է համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան: Սահմանված նպատակի իրագործման համար ՌԾ-ում սահմանվել են հետևյալ քայլերը՝ ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ, ժամանակակից, բարենպաստ աշխատանքային միջավայր և այլն:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ 2021 թ-ին հաստատված «Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգի»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ: Վերջին 2 տարվա ընթացքում թափուր հաստիքի համալրման համար հայտարարվել և անցկացվել է 1 մրցույթ, որին մասնակցել է երկու թեկնածու: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում հարցաթերթի լրացում թեկնածուների կողմից և հարցազրույց, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը: Ըստ քոլեջում գործող դասախոսների ընտրության ընթացակարգի՝ հիմնական չափանիշներն են համարվում կրթության մակարդակը և որակավորումը:

Վերջին տարիների ընթացքում քոլեջում գործատու-դասախոսներ ներգրավված չեն: Գործատու-դասախոսների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում խնդիր է դիտարկվել նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, քոլեջը չի դիտարկում իր շրջանավարտներին հետագայում դասախոսներ ընդգրկելու հնարավորությունը: Շրջանավարտ-դասախոսներ հաստատությունում առկա չեն (բացառությամբ 1 դեպքի, այն էլ վաղուցվա շրջանավարտներից):

ՇՊՏՔ-ում առկա են աշխատակազմի, այդ թվում՝ դասախոսների, պաշտոնի անձնագրեր՝ հաստատված 2021թ-ին, որտեղ նկարագրված են դասախոսական կազմին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ ուսումնական, դաստիարակչական գործունեության իրականացում, սովորողներին մասնագիտական գիտելիքներով ապահովում, մասնակցություն քոլեջի ուսումնամեթոդական և այլ աշխատանքների իրականացմանը: Սակայն մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ սույն կամ քոլեջի այլ փաստաթղթում նկարագրված չեն:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՇՏՊՔ-ի կողմից լրամշակվել են դասախոսական կազմի պաշտոնի անձնագրերը:

Քոլեջում դասավանդում են 36 դասախոս, որոնցից 35-ն ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական: Դասախոսական կազմի 8 աշխատակիցներ աշխատում են համատեղությամբ, 1-ը՝ ժամավճարային հիմունքներով: Ըստ ԻՎ ներկայացված տվյալների՝ քոլեջի դասախոսական կազմի գերակշիռ մասն ունի 5-ից ավելի տարվա դասավանդման փորձ քոլեջում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վարչական աշխատակազմի հիմնական մասը համատեղությամբ դասավանդում է քոլեջում:

2021թ.-ին քոլեջում հաստատվել է «Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգը»: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընթացակարգի համաձայն գնահատումն իրականացվում է դասալսումների (այդ թվում՝ փոխադարձ) միջոցով՝ դասալսող հանձնաժողովի կողմից (փոխտնօրեն, ամբիոնի վարիչ, ՈԱ պատասխանատու): Դասալսումներն իրականացվում են ըստ «Դասավանդման, մշտադիտարկման և գնահատման ձևաթերթ»-ի: Քոլեջում իրականացվում է նաև ըստ հաստատված պլան-ժամանակացույցի պարբերաբար դասախոսական կազմի գնահատում ուսանողների կողմից՝ հարցումների միջոցով: Յուրաքանչյուր ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները գնահատում են տվյալ ՄԿԾ-ի առարկաներ կամ մոդուլներ դասավանդող մասնագետներին՝ «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցաթերթի միջոցով: Արտաքին շահակիցների կողմից դասախոսների գնահատում չի իրականացվում:

Դասալսումների գնահատման արդյունքները քննարկվում են դասախոսների հետ: Քննարկումների առանցքում են արդի լավագույն դասավանդման մեթոդների և մոտեցումների փորձի փոխանակումը: Գնահատման արդյունքները ՈԱ պատասխանատուի միջոցով հասանելի են դառնում դասախոսական կազմին: Քննարկումների արդյունքում հաստատությունում առկա են բարելավումների նախադեպեր (մեթոդներ, ռեսուրսներ, փորձի փոխանակում):

Քոլեջում դասախոսների գնահատման գործող մեխանիզմների արդյունավետության գնահատում դեռևս չի իրականացվել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջամբիոնային փորձի փոխանակման միջոցառումները հստակ պլանավորված և կանոնակարգված չեն:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը ֆինանսական միջոցներ չի հատկացրել դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների նպատակով, ինչի պատճառ են հանդիսանում ֆինանսական սուղ պայմանները: Նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտությունը ևս շեշտադրված է որպես խորհրդատվություն: ՇՊՏՔ-ում իրականացվող դասախոսական անձնակազմի գնահատման և կարիքների վերհանման արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան քոլեջը առանձին դեպքերում (օտար լեզվի մակարդակի բարձրացման, հագուստի մոդելավորման դեպքում ծրագրային նախագծում ուսումնասիրելու համար) իրականացրել էր դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Հաստատության որոշ դասախոսներ հնարավորության դեպքում սեփական նախաձեռնությամբ մասնակցել են մասնագիտական դասընթացների և վերապատրաստումների:

ՇՏՊՔ դասախոսները մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից կազմակերպվող մեթոդական վերապատրաստումներին: 2023-2024թթ մեթոդական վերապատրաստումներին մասնակցել են քոլեջի 18 դասախոսներ:

Ինչ վերաբերվում է կայունությանը, ապա ներկայումս քոլեջում դասավանդողների կազմում գերակշռում են միջին տարիքի (36-55 տարեկան) դասախոսներ, քոլեջի յուրաքանչյուր կրթական ծրագրում 3-5 դասախոս է ընդգրկված: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջում մասնագիտական մոդուլներ դասավանդող դասախոսները դասավանդում են 8-10 մոդուլ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը: 2021թ-ին հաստատվել է «Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգը», սակայն ընթացակարգից իրականացվում են միայն ներքոլեջային սեմինարներ և դասընթացներ: Նոր դասախոսների հետ մենթորական աշխատանքներ են իրականացնում ամբիոնի վարիչները՝ դասալսումների և դրանց արդյունքում դուրս բերված հարցերի շուրջ խորհրդատվությունների տեսքով:

ՇՊՏՔ-ում գործող վարչական կազմի գործառույթները սահմանվում են պայմանագրերով և պաշտոնների նկարագրերով: Վարչական կազմի խրախուսման մեխանիզմներից գործում է միայն շնորհակալագրերի հանձնումը: Դրամական խրախուսանքի օրինակներ քոլեջում առկա չեն ֆինանսական միջոցների սակավության պատճառով:

ՇՊՏՔ-ում, որպես այդպիսին, առկա չէ ուսումնաօժանդակ կազմ և հաստիքացուցակով նույնպես ուսումնաօժանդակ կազմ նախատեսված չէ:

Դատողություններ: Փորձագիտական խմբի կողմից քոլեջի դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջն ընդհանուր առմամբ երաշխավորում է իր կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմով ապահովվածության կայունությունը: Չնայած դրան, քոլեջի դասախոսների մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները հստակեցման, փաստաթղթավորման և ըստ մասնագիտությունների առանձնահատկությունների նկարագրման կարիք ունեն:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր մասնագիտական դասախոս դասավանդում է բազմաթիվ մասնագիտական մոդուլներ՝ փորձագիտական խումբը ռիսկային է համարում քոլեջում դասախոսների փոխարինման հնարավորությունը: Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում քոլեջում գործատու-դասախոսների բացակայությունը, ինչը կնպաստեր ուսանողների պրակտիկ հմտությունների ձեռքբերմանը և պրակտիկ ոլորտի նորարարություններին տեղյակ լինելուն:

Հաշվի առնելով քոլեջի դասախոսական կազմի միջին տարիքի ցուցանիշը և նոր դասախոսներ ներգրավելիս երիտասարդ կադրերով համալրման նախապատվությունը՝ կարելի է արձանագրել, որ քոլեջի դասախոսական կազմը համեմատաբար երիտասարդացման միտում ունի:

Փորձագիտական խումբը կարևորում է դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման ընթացակարգի հաստատումը քոլեջում, սակայն ֆինանսական միջոցների բացակայությունը խոչընդոտում է ընթացակարգի արդյունավետ իրականացմանը, մասնավորապես՝ մասնագիտական, մեթոդական և օտար լեզվի վերապատրաստումների կազմակերպմանը: Եթե մեթոդական վերապատրաստումների կազմակերպումը որոշ չափով իրականացվում է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից, ապա մասնագիտական և լեզվական վերապատրաստումների բացը դեռևս մնում է արդիական, ինչը կարող է երկարաժամկետում խոչընդոտել դասախոսների մասնագիտական առաջընթացին:

Փորձագիտական խումբը գտնում է, որ մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման տեսանկյունից կարևոր դերակատարում կարող են ունենալ քոլեջի հետ համագործակցող գործատուները և սոցիալական գործընկերները (բուհեր, ՀԿ-ներ և այլն), ինչը

կնպաստի դասախոսների մասնագիտական զարգացմանը և պրակտիկ հետազոտական աշխատանքներում նրանց ներգրավվածությանը:

Դասախոսական կազմի գնահատման համար քոլեջում կիրառվող մեխանիզմները, առավելապես՝ դասալսումները, թողել են իրենց դրական ազդեցությունը կրթական գործընթացի բարելավման վրա, սակայն դրամական խրախուսման մեխանիզմի բացակայությունը չի նպաստում դրական փորձի տարածման մոտիվացիային:

Եզրահանգում: Հաշվի առնելով քոլեջի կրթական ծրագրերի իրականացման համար բավարար դասախոսական կազմի առկայությունը, դասախոսական կազմի գնահատման մեխանիզմների և դրանց հիման վրա բարելավումների իրականացումը, դասախոսական կազմի գնահատման և առաջընթացի ապահովման համար հաստատված քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

Քոլեջը հետազոտական աշխատանքների իրականացումը որպես ռազմավարական առաջնահերթություն դիտարկում է «Միջազգային համագործակցության կապերի հզորացում» ռազմավարական խնդրի շրջանակներում, որպես միջոցառում նախատեսելով՝ «Խթանել քոլեջի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել քոլեջի ինտեգրումը եվրոպական հետազոտական տարածքին, քոլեջում պարբերաբար կազմակերպել սեմինարներ, գիտաժողովներ, այդ թվում միջազգային գիտաժողովներ՝ հասնելու կայուն համագործակցող միջքոլեջային խմբերի ձևավորմանը, միջազգային և փորձարարական ծրագրերում քոլեջի արդյունավետ մասնակցությանը, նրա զարգացմանը»:

Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ որևէ քաղաքականությամբ սահմանված չէ, թե քոլեջը ինչպես է իրականացնում կրթական գործընթացում հետազոտությունները և Որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակում նախատեսված վերլուծական հմտությունների ձևավորումը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՏՊՔ-ն դեռևս չի սահմանել իր հետազոտական ուղղությունները: Քոլեջում հետազոտական աշխատանքը չի հանդիսանում մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս, նաև մշակված չեն նման աշխատանքներ իրականացնելու մեթոդական ցուցումներ, անհատական աշխատանքների ներկայացման-հանձնման կարգ:

ՇՏՊՔ-ում ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողներն իրականացնում են հետազոտական աշխատանքներ՝ կուրսային, ռեֆերատային աշխատանքների տեսքով, ինչպես

նաև դիպլոմային նախագծեր/աշխատանքներ: Դիպլոմային աշխատանքներ թույլատրվում է գրել բոլոր ուսանողներին՝ անկախ առաջադիմությունից:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտական բաղադրիչն առավելապես արտահայտված է դուալ կրթական ծրագրով՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության դիպլոմային և կուրսային աշխատանքներում: Դուալ կրթական ծրագրի շրջանակներում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության ՄԿԾ-ի մոդուլների դասավանդման ընթացքում հանձնարարվում են անհատական և խմբային աշխատանքներ ձևավորելով ուսանողի անհատական պորտֆոլիոն: Պորտֆոլիոն իրենից ներկայացնում է ուսումնառության տարիների ընթացքում ուսանողների անհատական և խմբային աշխատանքների փաթեթը: Այս փաթեթները առկա են նաև «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ի դեպքում: «Հագուստի մոդելավորում և նախագծում» մասնագիտության դիպլոմային աշխատանքները հետազոտական բաղադրիչ չեն պարունակում: «Սոցիալական աշխատանք» մասնագիտության շրջանակներում սոցիալական դեպքերի ուսումնասիրման աշխատանքները արտացոլվում են դիպլոմային աշխատանքներում տեսական նյութի համադրմամբ:

Դիպլոմային աշխատանքների վերաբերյալ կարծիք են ներկայացնում ուսանողի անմիջական ղեկավարը և գրախոսողը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հետազոտության որոշակի տարրեր են պարունակում նաև տարբեր մոդուլների շրջանակներում ուսանողներին հանձնարարվող ռեֆերատները, ինքնուրույն աշխատանքները և այլն: «Սոցիալական աշխատանք» մասնագիտության շրջանակներում հետազոտությունների կիրառումը ուսումնական գործընթացում իրականացվում է սոցիալական դեպքի վարման իրավիճակային խնդիրների կիրառմամբ ինքնուրույն աշխատանքների միջոցով:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ում կիրառվում են դասախոսական կազմի կողմից մշակված ուղեցույցներ տարբեր մոդուլային ծրագրերի շրջանակներում, ինչը առկա չէ «Սոցիալական աշխատանք» և «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ներում:

Քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր: Խրախուսման մեխանիզմները բացակայում են:

Դասախոսական կազմը հետամուտ է մասնագիտական ոլորտում ուսումնասիրելու տարածաշրջանային փորձը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հետազոտական աշխատանքների ներդրման համար ՇՏՊՔ-ն պլանավորում է իրականացնել համապատասխան քայլեր: Մասնավորապես, ձեռք է բերվել համագործակցության բանավոր համաձայնեցում Շիրակի պետական համալսարանի հետ: Նախատեսվում է նոր ուսումնական տարվա սկզբին անցկացնել դասախոսական անձնակազմի վերապատրաստումներ և փորձի փոխանակում հետազոտական աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Բացի այդ, քոլեջի տնօրենը հանդիպում է ունեցել Technoseum հիմնադրամի Նիդերլանդների ներկայացուցիչ՝ Ռենե Բյոնքի հետ. ձեռք է բերվել բանավոր համաձայնություն հետագա համագործակցության վերաբերյալ Էրազմուս+ ծրագրի շրջանակներում: Technoseum կրթական ծրագրի հիմքում ընկած է հետազոտական աշխատանքների իրականացման համար

կարողությունների զարգացմանն ուղղված նախագծային կրթությունը: Քոլեջը ծրագրին նախատեսում է մասնակցել 2024թ. նոյեմբերին:

Հատկանշական է, որ նախորդ հավատագրման փորձագիտական զեկույցում տվյալ չափանիշի համար փորձագետների ներկայացված խորհրդատվությունների ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ՇՏՊՔ-ում ուսանողները իրականացնում են հետազոտական բնույթի որոշ աշխատանքներ: Սակայն համապատասխան քաղաքականության բացակայությունը չի նպաստում քոլեջում հետազոտության զարգացմանը և հիմքեր չի ստեղծում հետազոտության ոլորտում քոլեջի սահմանած հավակնոտ նպատակի իրականացման համար:

Չնայած նրան, որ դասախոսների կողմից ուսանողներին տրվող հանձնարարականները պարունակում են վերլուծություն ենթադրող տարրեր, սակայն դրանք ինստիտուցիոնալ հիմքի վրա դրված չեն: Մտահոգիչ է, որ ուսանողների կողմից իրականացված աշխատանքներն իրենց բովանդակությամբ չեն նպաստում վերլուծական և ստեղծագործական մտքի զարգացմանը, որը կարող է վտանգել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի որակավորման լիարժեք ձեռքբերումը:

Քոլեջի բյուջեով հետազոտության համար նախատեսված ծախսերի, դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև քոլեջի հետազոտական ուղղությունների սահմանված չլինելը չի նպաստում քոլեջի հետազոտական գործունեության ինստիտուցիոնալ զարգացմանը, դասախոսական և ուսանողական համակազմի հետազոտական հմտությունների շարունակական բարելավմանը:

Փորձագիտական խումբը ընդգծում է, որ առկա է անհրաժեշտություն ուսանողներին ծանոթացնել հետազոտություն իրականացնելու գործիքակազմի, քոլեջի կողմից ներկայացվող ձևաչափային պահանջների հետ, ինչը հնարավորություն կտա ուսանողներին ծանոթանալ հետազոտական աշխատանքի մեթոդաբանությանը և իրականացնել հետազոտական բնույթի աշխատանքներ:

Մյուս կողմից, դասախոսական անձնակազմի հետազոտական գործունեության խթանման մեխանիզմների ստեղծումը կնպաստի դասախոսների մասնագիտական աճին, ուսանողների ներգրավմանը համատեղ հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև ավելի ուժեղ կդարձնի քոլեջում հետազոտություն-ուսումնառություն կապը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը չի հստակեցրել իր հետազոտական հետաքրքրություններն ու հավակնությունները, դեռևս մշակված չեն հետազոտությունների զարգացմանը միտված գործնական ծրագրեր, ձևավորված չեն հետազոտությունների իրականացման հստակ պահանջներ դասախոսների և ուսանողների համար, ներդրված չեն հետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն չի բավարարում Չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

Քոլեջի ՌԾ խնդիրներից է. «Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել քոլեջի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական ծրագրերի կարիքներին համապատասխան, Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար», իսկ ֆինանսական կայունության տեսանկյունից՝ «Ապահովել ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը, բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը, վարչական ծառայությունների որակը»:

Քոլեջն ունի 998 մ^2 տարածք, մեկ ուսանողին բաժին ընկնող լսարանային մակերեսը կազմում է շուրջ 3.04 մ^2: Քոլեջն ունի 3 մասնաշենք, 17 լսարան, 2 կարի արհեստանոց, մեկ խոհանոց և մեկ ավտովերանորոգման լաբորատորիա: Առկա չէ բուֆետ և փակ մարզադահլիճ: Համակարգչային լսարանները 8-ն են, որոնք հագեցված են համակարգիչներով, սակայն որոշներն ունեն տեխնիկական վերազինման և ծրագրային համալրման կարիք: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի 2 լսարան, որոնք դիտարկվում են նաև որպես լաբորատորիա՝ նախատեսված քիմիայի, կենսաբանության և ֆիզիկայի դասընթացների կազմակերպման համար, սակայն դրանցում առկա լաբորատոր սարքերի և նյութերի բազան հին է: Մասնավորապես՝ «Հագուստի մոդելավորում և նախագծում» ՄԿԾ-ում իրականացվող «Մարդու ֆիգուրայի սխեմատիկ պատկերման հմտություններ», «Մասնագիտական նկարչության և գեղարվեստական գրաֆիկայի նախնական հմտություններ», «Հագուստով ֆիգուրայի էսկիզների կատարման նկարչական հմտություններ» մոդուլների համար քոլեջում առկա չէ նկարչության լսարան և գիպսե ֆիգուրաներ (ձեռք, ականջ, աչք, մարմին և այլ): Լսարանի և ռեսուրսների բացակայության հետևանքով ուսանողները այդ մոդուլները անցկացնում են կարի լաբորատորիայում՝ իրականացնում են նկարների արտատպում սոցիալական կայքերից:

Քոլեջի գրադարանն ունի շուրջ 8078 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում տեխնիկական և գեղարվեստական էր՝ հայերեն և ռուսերեն լեզուներով: Գրադարանը թվայնացված չէ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործնական հմտությունների ձևավորման, պրակտիկաների իրականացման համար քոլեջն օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները: Մասնավորապես՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» ՄԿԾ-ի շրջանակներում գործնական հմտությունների ձեռքբերմանը նպաստում են GTC-ում առկա ՏՀՏ միջոցները և «Հագուստի մոդելավում և նախագծում» ՄԿԾ-ում՝ Լենտեքս ՍՊԸ- ում առկա կարի մեքենաները:

Քոլեջն ունի մեկ շարժական և մեկ անշարժ պրոյեկտոր: Քոլեջի համակարգչային լսարաններից մեկը 2022 թվականին վերազինվել է Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) կողմից, կարի արհեստանոցը վերազինվել է 2022-2023 ուս. տարում:

2023թ.-ին պետական ֆինանսավորումից մուտքերը կազմել են 98.67%, իսկ ուսանողների վարձավճարներից մուտքերը՝ 1.33%-ը: Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023թ.-ին բյուջեի 84,8%-ը հատկացվել է աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարումներին, 8%-ը՝ սոցիալական նպաստներին (կենսաթոշակներ), 7%-ը՝ ծառայությունների և ապրանքների ձեռք բերմանը, այլ ծախսերը՝ 0,2%: Ըստ 2022-2023թթ. բյուջեի բաշխման տվյալների՝ դասախոսների վերապատրաստման իրականացման, համակարգչային լսարանների վերազինման համար քոլեջը դրամական հատկացումներ չի տրամադրել:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության արդյունքում ստացվող եկամուտների նախադեպեր քոլեջում առկա չեն: Հաշվետու ժամանակահատվածում քոլեջը չի իրականացրել ֆինանսական այլընտրանքային հոսք ապահովող կարճաժամկետ ծրագրեր, սակայն դրանք պլանավորման փուլում են: Ֆինանսական ներհոսքի բազմազանեցման խնդիրը նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ևս ներկայացված է որպես խորհրդատվություն:

Քոլեջը կրթական ծրագրերի համար պահանջվող նվազագույն ռեսուրսների հաշվարկ չի իրականացրել և հստակ չէ՝ ուսանողների ո՞ր քանակն է ապահովում ինքնածախսածածկում: Ֆինանսական ռեսուրսների գնահատման արդյունքում քոլեջն ուսանողների վարձավճարները 2023-2024 ուս. տարում ավելացրել է 50 հազարով՝ դարձնելով 150.000 դրամ: Քոլեջի հիմնավորմամբ դա իրականացվել է ֆինանսական միջոցների սղության պատճառով:

Քոլեջում 2023 թվականին հաստատվել է «Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման» կանոնակարգը, որով սահմանվում է քոլեջի գործավարության կարգը: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է նաև էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ 4 պահակներով, ինչը նախատեսվում է փոխարինել պահնորդական ծառայության ներդրմամբ, այսինքն պահակների 3 հաստիքը կրճատվելու է, իսկ ցերեկային հսկողությունը իրականացվելու է տեսախցիկների միջոցով, որն ապահովելու է հավելյալ ֆինանսական ռեսուրսների տնտեսում կրճատված հաստիքների հիման վրա: Տեղադրված են տեսանկարահանող 6 սարքավորումներ, առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները մեծամասամբ գոհ են բուժկետի ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Առկա են թեքահարթակներ, սակայն ամբողջությամբ չեն ապահովում հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների համար անհրաժեշտ պայմաններ: Լաբորատորիաներում, բացառությամբ համակարգչային լսարանների, առկա չեն անվտանգության կանոնների պահպանման ցուցանակներ, սակայն դրանց կիրառման վերաբերյալ ուսանողներին ցուցումներ տրվում են բանավոր կերպով:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման համար կիրառվում են հարցումները: Որպես առկա խնդիրների արձագանքման միջոց օգտագործվում է բողոքների և առաջարկությունների արկղը, որը գործարկվել է նախորդ հավատարմագրման խորհրդատվության արդյունքում: 2022թ.-ին դասախոսների և ուսանողների շրջանում

իրականացված ռեսուրսներից բավարարվածության հարցումների համաձայն՝ ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ բավարար են համարում առկա նյութատեխնիկական բազան՝ միաժամանակ փաստելով դրանց վերազինման և արդիականացման անհրաժեշտության մասին: Ուսանողների և դասախոսների առաջարկությունները հիմնականում վերաբերում էին համակարգչային ռեսուրսների համալրմանն ու արդիականացմանը, քոլեջում բուֆետի և փակ մարզադահլիճի կառուցմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը գնահատում է ՇՊՏՔ-ի նպատակաուղղվածությունն՝ ապահովելու ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, չնայած այն հանգամանքին, որ առկա ֆինանսական միջոցները հնարավորություն չեն տալիս արդիականացնել ռեսուրսային բազան՝ գործատուների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Քոլեջում առկա է նաև լսարաններով ապահովվածության խնդիրը, լաբորատորիաներում համատեղվում են տեսական և գործնական պարապմունքները, ինչն ինքնին խոչընդոտում է գործնական հմտությունների և կարողությունների ձեռք բերմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն փաստը, որ չնայած առկա լսարանային խնդրին, քոլեջը նյութատեխնիկական բացը լրացնում է գործատուների բազայով՝ պրակտիկ դասընթացները կազմակերպելով համապատասխան կազմակերպություններում, ինչը նպաստում է ուսանողների մոտ պրակտիկ հմտությունների ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովելու նպատակով ապահովվում են ֆինանսական միջոցների բաշխման հնարավոր նվազագույն պայմաններ: Սակայն որակի շարունակական բարելավման և կայունության տեսանկյունից առկա են ռիսկեր, քանի որ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման համար ռեսուրսային բազան բարելավման անհրաժեշտություն ունի, ինչը վկայում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցները: Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ ուսումնական միջավայրի բարելավման նպատակով քոլեջը նախատեսում է քայլեր ձեռնարկել դրամաշնորհային միջոցներ հայթայթելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ապահով և անվտանգ ուսումնական միջավայր ստեղծելու ուղղությամբ ՇՏՊՔ-ն ընդհանուր առմամբ ապահովված է անհրաժեշտ տեխնիկայով և ռեսուրսներով:

Փորձագիտական խումբը դրական է համարում այն, որ քոլեջը փորձում է տրամադրվող ռեսուրսներից բավարարվածության կարծիք ստանալ ուսանողներից և դասախոսներից, սակայն հարցումների, դրանց կիրառման և վերլուծության արդյունավետության գնահատումը հավաստող հիմքերի բացակայությունը կարող է խոչընդոտել իրական պատկերի ճշգրիտ արտացոլմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ առկա է բավարար նյութատեխնիկական և ռեսուրսային բազա քոլեջի ՄԿԾ-ների իրականացման համար՝ ներառյալ պրակտիկա անցկացնող կազմակերպությունների ռեսուրսները, ռեսուրսային կարիքների վերհանման համար իրականացվում է ներքին շահակիցների կարիքների գնահատում, ստեղծված է ապահով և անվտանգ ուսումնական միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

ՇՏՊՔ-ում գործում է հաշվետվողականության ներքևից վերև համակարգ: Քոլեջը վերևից ներքև հաշվետվողականության օրինակ է դիտարկում տնօրենի զարգացման ծրագրի քննարկումը ներքին շահակիցների հետ: Քոլեջի ստորաբաժանումները տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ըստ քոլեջի կազմակերպական կառուցվածքով նախատեսված ենթակայության: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ներկայացված հաշվետվությունները կրում են հիմնականում նկարագրական բնույթ իրականացված գործընթացների վերաբերյալ, վերլուծական բաղադրիչի պահանջ դրված չէ: Հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի անհրաժեշտությունը կարևորվել էր նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում:

Տնօրենը հաշվետու է քոլեջի կառավարման խորհրդին: Բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության և արդյունքների համակցման հիման վրա յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից կազմվում և կառավարման խորհրդին է ներկայացվում հաշվետվություն՝ տարեկան գործունեության վերաբերյալ: Վերջինս քոլեջի գործունեության մասին հիմնական հաշվետու փաստաթուղթն է:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տնօրենի հաշվետվությունները չունեն վերլուծական հիմք. դրանք կրում են նկարագրական բնույթ՝ արտացոլելով քոլեջում իրականացված միջոցառումները և նախատեսվող միջոցառումները, օրինակ նախորդ տարվա հաշվետվության կամ ի հայտ եկած խնդիրների վերաբերյալ: Հարկ է փաստել, որ հաշվետվությունները կազմված չեն ՌԾ-ի հիման վրա և չեն արտացոլում ՌԾ-ի կատարողականը:

Քոլեջում գործում է գործունեության ներքին գնահատման հաշվետվություն, որի նպատակն է՝ գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, դասախոսների աշխատանքի արդյունավետության և ուսանողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով: Սակայն ներքին գնահատման հաշվետվությունները չեն կենտրոնացել խնդիրների վրա և դրանց հիման վրա բարելավման քայլեր չեն արվել:

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ որպես տեղեկատվական հարթակներ օգտագործելով ֆեյսբուք սոցիալական ցանցը և պաշտոնական կայքէջը: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա, քոլեջում 2023-2024 ուս. տարվանից անխափան գործարկվել է կայքէջը, սակայն կայքէջում առկա չէ ՄԿԾ-ների մասին մանրամասն տեղեկատվություն: Կայքէջում հիմնականում տեղադրվում են քոլեջում հաստատված փաստաթղթերը, տնօրենի հաշվետվությունները և քոլեջի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը: Նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա, ֆեյսբուքյան էջում առկա է անընդհատ

թարմացվող տեղեկատվություն՝ կազմակերպված միջոցառումների, սեմինարների, կնքված հուշագրերի, առկա թափուր աշխատատեղերի, ուսանողների առօրյայի և քոլեջում գործող մասնագիտական կրթական ծրագրերի մասին: Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ֆեյսբուքյան էջի միջոցով յուրաքանչյուր ոք կարող է տեղեկանալ ինչպես քոլեջի առօրյայի, այնպես էլ ստանալ սպառիչ պատասխաններ՝ հուզող հարցերի մասին:

Քոլեջում 2023թ.-ին հաստատվել է Հասարակայնության հետ կապերի ռազմավարության գործողության ընթացակարգ, որի հիմնական նպատակն է բարձրացնել քոլեջի ճանաչելիությունը, ինչպես նաև ներքին և արտաքին սպառողների համար բովանդակային տեղեկատվության հասանելիության ապահովումը: Քոլեջի հետադարձ կապի քաղաքականությունը և մեխանիզմները նկարագրված են Կրթության որակի ապահովման ձեռնարկում:

Հետադարձ կապի ապահովման համար քոլեջը պարբերաբար կազմակերպում է բաց դռների օրեր, որոնց ընթացքում այցելուներին ներկայացվում են քոլեջի կրթական ծրագրերի առանձնահատկությունների, ընդունելության կարգին վերաբերող մանրամասներ: 2023-2024 ուս. տարվանից իրականացվում են գործատուների և շրջանավարտների հետ հարցումներ և վերլուծվում դրանց արդյունքները:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը գործատուների խորհրդի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկում է մասնագիտական կրթական ծրագրերում առկա խնդիրները, փորձում համատեղ գտնել զարգացման հնարավորություններ:

Փորձագիտական այցի ընթացքում պարզ դարձավ, որ հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված կարճաժամկետ ծրագրերը քոլեջում վերջին տարիներին կասեցվել են, և հիմա փորձում են վերաբացել գործատուների առաջարկների հիման վրա, ինչպես օրինակ՝ հացթուխություն, կարի տեխնոլոգիայի ծրագրեր և այլն՝ դիտարկելով դրանք որպես ֆինանսական աղբյուրի հնարավորություններ: Սոց. աշխատանք մասնագիտության ուսանողներն իրականացնում են կամավորական աշխատանքներ տարբեր գործատուների մոտ, բացի այդ քոլեջի նախաձեռնությամբ իրականացրել են բռնի տեղահանված արցախահայերի հետ տարվող սոցիալական աշխատանքներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջում կանոնակարգված գործող հաշվետվողականության համակարգը, որն ընդգրկում է բոլոր ստորաբաժանումներն ու պաշտոնատար անձանց, սակայն հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի թույլ արտահայտվածությունը չի նպաստում համեմատական վերլուծության միջոցով խնդիրների դուրսբերմանը և հնարավոր լուծումներ գտնելուն:

Որպես դրական փորձ է դիտարկվում գործունեության ներքին գնահատման մեխանիզմը, սակայն անհրաժեշտություն կա այն ավելի թիրախային իրականացնել՝ կապելով ՌԾ կատարողականի հետ:

Քոլեջն ընդհանուր առմամբ կարողանում է ապահովել իր ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը՝ կիրառելով տեղեկատվական հարթակները: Միևնույն ժամանակ կայքը դեռևս գործարկվում է մասնակի՝ չարտացոլելով գործող կրթական ծրագրերի մասին մանրամասն տեղեկատվություն:

Քոլեջը վերջին տարիներին կանոնակարգել է հասարակության հետ կապերի ձևավորման և հետադարձ կապի մեխանիզմների կիրառումը: Ի թիվս կազմակերպվող

միջոցառումների, գործարկվել են գործատուների և շրջանավարտների կարիքների վերհանման և խնդիրների քննարկման մեխանիզմներ, ինչը թույլ է տալիս տեղեկատվություն ստանալ կրթական ծրագրերի անհրաժեշտ արդիականացման վերաբերյալ:

Փորձագիտական խումբն ընդգծում է քոլեջի ստանձնած կարևոր դերակատարությունը տարածաշրջանում սոցիալական աշխատանքի բնագավառում հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված ծրագրերի և միջոցառումների առումով: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքները նպաստել են տվյալ մասնագիտությամբ ուսանողների մասնագիտական հմտությունների զարգացմանը: Այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված ծրագրերի դրական փորձը կարելի է տարածել նաև մյուս մասնագիտությունների վրա, ինչը կնպաստի քոլեջի բարի համբավի ձևավորմանը տարածաշրջանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է կանոնակարգված հաշվետվողականության համակարգ, հաշվետվությունները հասանելի են շահակիցների համար, կիրառվում են հասարակության հետադարձ կապի մեխանիզմներ, իրականացվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

ՇՏՊՔ-ում արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված հստակ քաղաքականություն և ընթացակարգեր ներդրված չեն:

Քոլեջն իր ՌԾ-ում սահմանել է «Համագործակցության հզորացումը» որպես նպատակ: Նպատակին հասնելու համար առանձնացվել են խնդիրներ՝ Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության զարգացում, Սոցիալական գործընկերների հետ համագործակցության զարգացում, Միջազգային համագործակցության կապերի հզորացում: Վերջինիս հետ կապված նախատեսվել է «Խթանել, կապեր հաստատել և համագործակցել միջազգային կազմակերպությունների, համանման քոլեջների հետ, հասնել ուսանողների փոխանակման, արտերկրում մասնագետների վերապատրաստման լավագույն հնարավորություններին»:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում արտաքին կապերի ձևավորման գործում փաստացի դերակատարում ունի տնօրենը: Տնօրենի ակտիվ մասնակցության և փորձառության շնորհիվ գործուն կապեր են հաստատվել տարածաշրջանի գործատուների հետ: Վերջինիս նախաձեռնությամբ ձևավորվել և գործում է տնօրենին կից Գործատուների խորհուրդ, որտեղ ներգրավված են տարածաշրջանի թվով 15 գործատուներ: Նշված գործատուների հետ

կնքվել են համագործակցության հուշագրեր, որտեղ ամրագրված են կրթական ծրագրերի բարելավման միտված նպատակներ: Տարին մեկ անգամ տեղի է ունենում Գործատուների խորհրդի նիստ, որտեղ քննարկվում են աշխատաշուկայի պահանջները և ՄԿԾ-ների արդիականացման խնդիրները, ինչպես նաև թափուր աշխատատեղերի վերաբերյալ քոլեջը տեղեկատվություն է ստանում գործատուների խորհրդի անդամներից: Համագործակցության նշված մեխանիզմը ներդրվել է նախորդ հավատարմագրման խորհրդատվության հիման վրա:

Քոլեջն ունի գործատու գործընկերներ բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում: Գործատուների հետ համագործակցությունը կրում է երկարամյա բնույթ և հիմնականում պրակտիկաների կազմակերպման շրջանակներում է, որի արդյունավետության վերաբերյալ իրականացվել են հարցումներ, որոնց հիման վրա առկա են որոշ բարելավումներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ վերջին երկու տարիների ընթացքում գործատու-դասախոսներ ներգրավված չեն կրթական գործընթացում, որը քոլեջը պայմանավորում է ցածր աշխատավարձով:

Քոլեջում առկա չէ արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածք: Ոլորտը կանոնակարգված չէ և ամբողջությամբ համակարգվում է քոլեջի տնօրենի կողմից: Քոլեջը փորձում է քայլեր ձեռնարկել միջազգայնացման ուղղությամբ կապերի հաստատման համար: Մասնավորապես, տեղի է ունեցել հանդիպում Technoseum հիմնադրամի Նիդերլանդների ներկայացուցիչ՝ Ռենե Բյոնքի հետ. ձեռք է բերվել բանավոր համաձայնություն հետագա համագործակցության վերաբերյալ «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում: Քոլեջը ծրագրին նախատեսում է մասնակցել 2024թ. նոյեմբերին: Բացի այդ, 2022թ.-ին Գյումրու թվով 4 քոլեջների ներկայացուցիչների և «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչների հետ տեղի է ունեցել հանդիպում, որի ընթացքում ներկայացվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար կարողությունների զարգացման, նախագծերի մշակման կարևորության, միջազգային համագործակցության հնարավորությունները «Էրազմուս+» ծրագրի միջոցով:

Ուսանողների և դասախոսների շարժունության ծրագրերին մասնակցության օրինակներ դեռևս առկա չեն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՇՊՏՔ-ի դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը թույլ է: Նշված խնդիրը արձանագրվել է նաև նախորդ հավատարմագրման փորձագիտական զեկույցում: Լեզվական կարողությունների զարգացման և օտար լեզվի իմացության բարելավման նպատակով 2020-2021 ուս. տարում քոլեջի օտար լեզվի դասախոսները անցկացրել են ներքոլեջային դասընթաց դասախոսական և վարչական անձնակազմի համար: Սակայն դասախոսների մասնակցության ցուցանիշը ցածր է եղել: Քոլեջում վերջին երկու տարիների ընթացքում իրականացվող դասախոսական կազմի կարիքների գնահատման արդյունքում դուրս բերված օտար լեզվի իմացության անհրաժեշտությունը մնում է արդիական: Քոլեջն ԻՎ-ում, որպես թույլ կողմ, նշում է, որ դասախոսական, վարչական անձնակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության ցածր մակարդակը խոչընդոտ է հանդիսանում միջազգային ծրագրերում վերջիններիս ներգրավվածության համար: Ըստ ԻՎ ներկայացված տվյալների՝ դասավանդողների 8,1%-ը, վարչական աշխատակիցների՝ 10%-ն են տիրապետում անգլերենին, իսկ ուսանողների՝ 32%-ը ռուսերեն/անգլերենին:

Ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով քոլեջի տնօրենի նախաձեռնությամբ Խաղաղության կորպուսից հրավիրվել է կամավոր մասնագետ,

որը օտար լեզվի պարապմունքներ է անցկացնելու ուսանողների հետ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախատեսվում է նաև ապահովել դասախոսական կազմի մասնակցությունը նմանատիպ պարապմունքներին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը կարևորում է արտաքին կապերի զարգացումը, հզորացումը, սակայն չունի արտաքին կապերի զարգացման տեսլականը արտացոլող քաղաքականություն, ընթացակարգեր և չի իրականացնում կանոնակարգված գործընթաց, որը հնարավորություն կտար քոլեջին հստակ պլանավորել իր գործողությունները տեսլականի ապահովման ուղղությամբ:

Գործատուների խորհրդի առկայության շնորհիվ քոլեջն ակտիվ համագործակցություն է ծավալում տարածաշրջանի գործատուների հետ, որը հնարավորություն է տալիս քոլեջի ուսանողներին մասնակցել պրակտիկաների, իսկ հետագայում նաև ընդունվել աշխատանքի: Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի տնօրենի նախաձեռնողականությունը տարբեր գործընկեր կառույցների հետ արտաքին համագործակցության հաստատման հարցում, որը կարող է նպաստել արտաքին կապերի ամրապնդմանը և ուսանողների համար գործնական միջավայրի ընդլայնմանը, ինչպես նաև ՄԿԾ-ների բարելավմանը և արդիականացմանը: Սակայն քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ստորաբաժանման կամ պատասխանատուի բացակայությունը վտանգում է գործընթացների կանոնակարգմանը և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջն իր ՌԾ նպատակն իրականացնելու համար պետք է ջանքեր գործադրի միջազգային գործընկերներ գտնելու ուղղությամբ, ինչը կնպաստի հավելյալ ռեսուրսների ներգրավմանը, ուսանողների և դասախոսների շարժունությանը, ինչպես նաև նմանատիպ ՄԿԾ-ներ իրականացնող տեղական և միջազգային հաստատությունների հետ ակտիվ և արդյունավետ համագործակցությանը և փորձի փոխանակմանը:

Չնայած օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակի ապահովման ուղղությամբ քոլեջի ձեռնարկած քայլերի՝ դասախոսական, վարչական անձնակազմի և ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը դեռևս ցածր է, ինչը խոչընդոտ է հանդիսանում միջազգային ծրագրերում վերջիններիս ներգրավվածության համար:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը նախորդ հավատարմագրումից հետո ակտիվ կապեր է հաստատել գործատուների հետ, ստեղծել է համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ, առկա են մեխանիզմի գործարկման արդյունքներ և որոշ քայլեր է ձեռնարկում օտար լեզվի մակարդակի բարձրացման համար, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն բավարարում է Չափանիշ 9-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2017թ.-ից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա: Մասնավորապես, նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա 2021 թ-ին մշակվել և վերամշակվել են քոլեջի մի շարք կանոնակարգեր և ընթացակարգեր: 2023թ-ի վերջին հրապարակվել է Կրթության որակի ապահովման ձեռնարկը, որը ներառում է քոլեջի որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը, ՈԱ քաղաքականությունն ու ընթացակարգերը, գործող մեխանիզմները, ներգրավված հիմնական կառույցները և դերակատարները: Ձեռնարկի համաձայն՝ ՇՏՊՔ ՈԱ քաղաքականության նպատակն է բարձրացնել քոլեջի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Որակի շարունակական բարձրացման ռազմավարությունը կոչված է ապահովել դասավանդման, ուսումնառության ու գնահատման գործընթացների որակի շարունակական և կայուն բարելավումը՝ ուսանողների և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու կարիքներին համահունչ:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա քոլեջը հստակեցրել է ՈԱ գործընթացների պլանավորումը: Որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են կառավարման, դասավանդման և ուսումնառության կարիքների վերհանման, հետադարձ կապի մեխանիզմների ներդրման և տվյալների հավաքագրման վրա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է կես դրույք հաստիք: Քոլեջի սակավ լսարանային և կաբինետային ֆոնդով պայմանավորված՝ առանձին աշխատասենյակ պատասխանատուի աշխատանքներն իրականացնելու համար հատկացված չէ: Որակի ապահովման գործընթացներում ներգրավված են ստորաբաժանումների ղեկավարները, դասախոսներից և ուսանողներից ներկայացուցիչներ քոլեջում ձևավորված որակի մշտական հանձնաժողովի կազմում: Որակի ապահովման ոլորտում մասնագիտական վերապատրաստումների համար քոլեջը չի հատկացրել ֆինանսական ռեսուրսներ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նախորդ հավատարմագրման խորհրսատվությունների հիման վրա 2021թ.-ից քոլեջի որակի պատասխանատուի կողմից պարբերական (տարեկան) իրականացվում են հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների և դասախոսների, 2024թ-ից՝ Կարիերայի կենտրոնի հետ համատեղ նաև շրջանավարտների և գործատուների կարիքները:

Հարցաթերթիկների ոսումնասիրությունը ցույց տվեց, որ, մասնավորապես, շրջանավարտների և գործատուների հարցաթերթիկներում ներառված հարցերը բավականին ընդհանրական են և միտված չեն թիրախային խնդիրների դուրսբերմանը: Դրանց արդյունքների վերլուծությունները դեռևս զգալի ազդեցություն չեն թողել կրթական ծրագրի և կրթական գործընթացի բարելավումների վրա: Հարցումների արդյունքները քննարկվել են քոլեջի ղեկավար կազմի հետ, որոշ բարձրացված հարցեր լուծում են ստացել: Փորձագիտական այցից

պարզ դարձավ, որ կիրառվող հարցաթերթիկները արդյունավետության գնահատում չեն անցել և դեռևս չեն վերանայվել:

Կարիերայի կենտրոնի հետ միասին ՈԱ պատասխանատուն կազմակերպում է նաև ֆոկուս խմբային ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ ուսանողների հետ՝ միտված լրացուցիչ կրթական կարիքների դուրսբերմանը:

Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են քոլեջի ՈԱ գործընթացներում հարցումներին և քոլեջում կազմակերպվող ընթացիկ քննարկումներին մասնակցելով: Քոլեջի ներքին շահակիցները մասնակցել են նաև ինքնավերլուծության SWOT վերլուծությունների իրականացմանը:

Որակի ապահովման համակարգը քոլեջում նոր է ձևավորվում: Գործընթացները գտնվում են դեռևս պլանավորման և մասամբ նաև իրականացման փուլում:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, սակայն վերլուծական մոտեցումը մեծամասամբ բացակայում է: Հիմնականում նկարագրական բնույթ ունի, իսկ երբեմն էլ մեջբերված են փաստաթղթերից տեքստեր, որոնք չեն առնչվում չափորոշչին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ՈԱ պատասխանատուի կողմից կազմակերպվել և համակարգվել է ինքնավերլուծության գործընթացը: Կազմված ինքնավերլուծությունը, այսուհանդերձ, չի տարածվել շահակիցների ամբողջական շրջանակում: Ներքին շահակիցները, ներգրավվելով առանձին խմբերում, հիմնականում իրականացրել են ըստ չափանիշների SWOT վերլուծություններ: Արտաքին շահակիցները չեն մասնակցել ինքնավերլուծության աշխատանքներում:

Քոլեջը փորձում է իր գործընթացների որակի մասին տեղեկատվությունը ներքին և արտաքին շահակիցներին հասանելի դարձնել կայքէջի միջոցով՝ տեղադրելով տնօրենի տարեկան հաշվետվությունները: Չնայած դրան որակի պատասխանատուի կողմից իրականացված հարցումների ընդհանրական վերլուծությունները չեն հրապարակվում, այլ ներկայացվում են ամբիոնների հետ քննարկումների ժամանակ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջի որակի ապահովման ոլորտում նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա իրականացվել են մի շարք բարելավումներ, այդ թվում՝ փաստաթղթային բազայի լրամշակումներ, ՈԱ ձեռնարկի հրատարակում, կարիքների վերհանման և հետադարձ կապի մեխանիզմների ներդնում, տվյալների հավաքագրում և վերլուծությունների իրականացում: Արդյունքում ՈԱ ուսումնասիրությունների կենտրոնում են հայտնվել քոլեջի կրթական գործունեության գրեթե բոլոր ոլորտները:

Ճիշտ է, ՈԱ գործընթացների համար քոլեջի հատկացրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները սուղ են, սակայն, փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ ՈԱ պատասխանատուի համար ստեղծվել են անհրաժեշտ աշխատանքային պայմաններ, և, հաշվի առնելով քոլեջի անձնակազմի համեմատաբար փոքր թվաքանակը, հնարավոր է դարձել բավարար հիմքեր ստեղծել ՈԱ համակարգի ձևավորման համար:

Համադրելով քոլեջի կողմից իրականացվող հարցումները որակի քաղաքականությամբ սահմանված նպատակներին՝ կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ ՈԱ պատասխանատուն փորձում է պարբերաբար և համակարգված ձևով մեխանիզմը կիրառել կարիքների վերհանման

և հետադարձ կապի համար, սակայն հարցաթերթիկները մասնագիտական վերանայման կարիք ունեն, ինչը կնպաստի թիրախային խնդիրների դուրսբերման և արդյունքների հավաստիությանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ նախորդ հավատարմագրումից հետո ՈԱ ներքին համակարգը փորձել է ապահովել բավարար հիմքեր արտաքին գնահատման գործընթացների համար, սակայն փորձագիտական խումբը խնդրահարույց է համարում այն, որ ինքնավերլուծության իրականացման մշակույթը վերլուծական բաղադրիչի շեշտադրմամբ դեռ ձևավորված չէ: Միևնույն ժամանակ շահակիցների ակտիվ ներգրավումը ինքնավերլուծության աշխատանքներին և ՈԱ վերլուծությունների արդյունքների հրապարակումը կնպաստի քոլեջի գործունեության թափանցիկությանը: Բացի այդ, տվյալների հավաքագրման հավաստի և կայուն մեխանիզմների կիրառումը, դրանց արդյունքների թիրախային վերլուծությունը կնպաստեն կառավարման համակարգի համար տվյալահենք որոշումների կայացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո ՈԱ համակարգը վերանայվել է, լրամշակվել է կանոնակարգային փաստաթղթային բազան, ներդրվել են ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման համար հարցումների մեխանիզմը, հավաքագրվել են տվյալներ և իրականացվել որոշակի վերլուծություններ, ներքին շահակիցները ներգավվել են ՈԱ գործընթացներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ՇՏՊՔ-ն համապատասխանում է Չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՇՏՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է



Փորձագիտական խմբի ղեկավար
Գագիկ Քթրյան

4 սեպտեմբերի, 2024թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Գագիկ Քթրյան - 2005թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի բակալավրիատը՝ «մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2007թ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրան՝ «ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: 2010թ. շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008 - 2012 թթ Երևանի պետական համալսարանում եղել է՝ որպես Կրտսեր գիտաշխատող: 2008 - 2020թթ. եղել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում՝ որպես դասախոս: 2012 - 2015 թթ. ԵՊՀ-ում աշխատել է՝ որպես դասխոս: 2012 – 2015թթ. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում եղել է Որակի ապահովման կենտրոնի ղեկավարի պաշտոնում: 2015 – 2016թթ. ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանում եղել է՝ որպես Ուսումնամեթոդական բաժնի որակի ապահովման և վերլուծության բաժանմունքի պետ, 2016 – 2018թթ. նույն համալսարանի՝ Որակի ապահովման և վերլուծության բաժնի պետ: 2018 – 2021թթ. ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ-վարչության պետի տեղակալ (1-ին դասի խորհրդական): 2021 – 2023թթ. ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահի տեղակալ, 2023թ. հունվար - հոկտեմբեր՝ կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող: 2015թ.-ից մինչ օրս ներգրավված է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ՀՀ բուհերի և քոլեջների հավատարմագրման գործընթացներում, որպես փորձագետ: 2022թ.-ից մինչ օրս աշխատում է Հայաստանի Եվրոպական համալսարանում դասախոս:

Օլյա Ավետիսյան - 2012-2016թթ.-ին սովորել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հագուստի մոդելավում և նախագծում մասնագիությամբ, 2016-2019- ին սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Մագիստրոսական կրթություն է ստացել նույն համալսարանի «Հոգեբանություն» կրթական ծրագրում: Աշխատել է «Ալեքս Տեքստիլ» ՓԲԸ-ում որպես կոնստրուկտոր, ինչպես նաև «ԳՈԼԴ ՍՍԱՄ» ընկերությունում՝ 3D մոդելավորող: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս է:

Մարինա Փոթիկյան - 2003թ. ավարտել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Կառավարումը և տեղեկատվությունը տեխնիկական համակարգերում» մասնագիտությունը: Շարունակել է ուսումը նույն համալսարանի Կիբեռնետիկայի դեպարտամենտի «Ավտոմատացում և կառավարում» մասնագիտությամբ, ստացել մագիստրոսի աստիճան: 2012 թվականին ձևակերպվել է հայցորդ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ» ամբիոնում՝ «Տնտեսամաթեմատիկական մեթոդներ և մոդելավորում» մասնագիտությամբ: 2018 թվականին պաշտպանել է ատենախոսությունը «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ և ստացել տնտեսագիտության թեկնածուի աստիճան: 2005-2009 թթ աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ որպես օպերատոր, 2009 -2017 թթ.՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի

ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների ամբիոնում՝ որպես ասիստենտ։ 2017-2022թթ. նույն համալսարանում՝ որպես դասախոս։ 2020-2022թթ. աշխատել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համասարանի ինֆորմատիկայի և դրա դասավանդման ամբիոնում՝ որպես ասիստենտ։ 2022-2023թթ. աշխատել է ՀՀ ԱԻ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ որպես դասախոս։ 2020թ.-ից առ այսօր աշխատում է Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի մեխատրոնիկայի ամբիոնում՝ որպես դասախոս։ 2023թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ ՆԳ նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ որպես դասախոս։

Արտակ Խաչատրյան - 2020թ.-ից սովորում է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջում՝ «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ։ Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին։

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	18.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Ռեսուրսների դիտարկում	15:00	16:30	90 րոպե

N.	19.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում տնօրենի հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում փոխտնօրենների հետ	10:30	11:30	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ	11:40	12:20	40 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:30	13:30	60 րոպե
5.	Հանդիպում շրջանավարտների հետ	13:40	14:40	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	14:50	15:40	50 րոպե
7.	Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ	15:50	16:40	50 րոպե
8.	Հանդիպում ՌԱԽ ներկայացուցիչների հետ	16:50	17:30	40 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:40	18:30	50 րոպե

*N.	20.06.2023 թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների և դուալ կրթական ծրագրի ղեկավարի հետ			09:00	10:00	60 րոպե
2.	Պետական ամփոփիչ ատեստավորման դիտարկում			10:10	10:50	40 րոպե
3.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	Զուգահեռ հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում » մասնագիտության կրթական ծրագրի պատասխանատու/ների հետ	11:00	11:50	50 րոպե
4.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի	Զուգահեռ հանդիպում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	Զուգահեռ հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում » մասնագիտության կրթական ծրագրի դասախոսների հետ	12:00	12:50	50 րոպե

	դասախոսների հետ					
5.	Զուգահեռ հանդիպում «Հաշվողական տեխնիկայի եւ ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Սոցիալական աշխատանք» մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	Զուգահեռ հանդիպում «Հագուստի մոդելավորում և նախագծում » մասնագիտության կրթական ծրագրի ուսանողների հետ	13:00	13:50	50 րոպե
6.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			14:00	15:00	60 րոպե
7.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ			15:10	16:10	60 րոպե
8.	Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ			16:20	17:30	50 րոպե
9.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում			17:40	18:30	50 րոպե

N.	21.06.2024 թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կենտրոնի պատասխանատու, գրադարանավար, լաբորանտ, պրակտիկայի վարիչ, մանկավարժ-հոգեբան) ղեկավարների հետ	09:00	09:50	50 րոպե
2.	Պետական ամփոփիչ ատեստավորման դիտարկում	10:00	10:40	40 րոպե
3.	Հանդիպում ստորաբաժանումների /կենտրոնների (կադրերի բաժնի տեսուչ, հաշվապահ, արխիվավար, տնտեսվար) ղեկավարների հետ	10:50	11:30	40 րոպե
4.	Հանդիպում Կրթության որակի պատասխանատուի հետ	11:40	12:40	60 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
6.	Բաց հանդիպում	14:00	14:40	40 րոպե
7.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:50	15:20	30 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:30	16:30	60 րոպե
9.	Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ	16:40	17:00	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Քոլեջի ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքային խմբի հանդիպումների և քննարկումների արձանագրություններ	1
2.	Գործատուների խորհրդի նիստերի արձանագրություններ	1
3.	ՌԾ պլան-ժամանակացույց	1
4.	Բոլոր ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	2
5.	Կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ	2
6.	Աշխատաշուկայի պահանջների վերլուծություն	3
7.	Ամբիոնի նիստի արձանագրություններ, որոնք փաստում են մոդուլային ծրագրերում փոփոխությունները	3
8.	Թեմատիկ պլաններ	3
9.	Հանձնարարականների շտեմարաններ	3
10	Դասախոսների փաթեթներ	3
11.	Դասալսման ձևաթղթի լրացված տարբերակներ	3
12.	Պրակտիկայի ծրագրեր	3
13.	Դասախոսների կողմից մշակված և/կամ տպագրված ձեռնարկների օրինակներ	3
14.	Մատյաններ	3
15.	Շրջանավարտների բազա	3
16.	Ամբիոնի վարիչների փաթեթներ	3
17.	Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի եզրակացություն	3
18.	Պրակտիկայի օրագրերի լրացված օրինակներ /3 ՄԿԾ-ների/	3
19.	Ներկայացնել պրակտիկ նախագծերի կատարման օրինակներ	3
20.	Ուսանողների կողմից ձևավորած Պորտֆոլիոնների օրինակներ	3
21.	Ամբիոնի նիստերի արձանագրություններ	3
22.	«Սոցիալական աշխատանք » մասնագիտական դիպլոմային աշխատանքների կատարման ուղեցույց	3
23.	ՈւԽ նիստերի արձանագրություններ	4
24.	ՈՒԽ վերջին երկու տարվա տարեկան հաշվետվություն	4
25.	Կուրսղեկի հանդիպումների 2023-2024 թ-ի ժամանակացույց	4
26.	Դիպլոմային աշխատանքների և կուրսային աշխատանքների օրինակներ	4
27.	Գրախոսության օրինակներ	4
28.	Դասախոսների գնահատման ձևաթղթի լրացված օրինակներ	5
29.	«Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման» քաղաքականություն և ընթացակարգ	5
30.	Վերապատրաստում անցած դասախոսների ցանկ և թեմաներ	5
31.	Ներկայացնել 7.4 հավելվածը, Նախահաշիվ	7
32.	Ներկայացնել հավելված 2.2-ը, Կանոնակարգ տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման	7
33.	Կրթության որակի պատասխանատուի կողմից կամված ներքին և արտաքին շահակիցների ներկայացրած առաջարկությունների փաթեթ և վերլուծություն	8
34.	Համագործակցությունների համաձայնագրեր և հուշագրեր /պայմանագրեր/	9
35.	ՈԱԿ պլան և հաշվետվություն /վերջին 2 տարիների/	10
36.	Որակի մշտական հանձնաժողովների նիստերի արձանագրություններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Առարկայական կաբինետներ
- Մասնագիտական լաբորատորիաներ
- Գրադարան
- Ընթերցասրահ
- Համակարգչային լսարաններ
- Բուժկետ
- Արխիվ

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՇՏՊՔ - Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ

ԿԳՄՄՆ - Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՄԿԾ - մասնագիտության կրթական ծրագիր

ՄԿՈՒ - Մասնագիտական կրթություն և ուսուցում

ՄՈՒՀ - մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ - որակի ապահովում

ՈԱԱԿ - Մանագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն

ՈԱՇ - որակավորումների ազգային շրջանակ

ՊԿՉ - պետական կրթական չափորոշիչ

ՌԾ - ռազմավարական ծրագիր

ՈՒԽ - ուսանողական խորհուրդ

ՈՒՕ կազմ -ուսումնաօժանդակ կազմ